

Թ. Ն. ՓԱՆՈՐԱՄԱՅԱՆ

ԴԵՐՍԻՄԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՔԱՐՏԵԶԸ

ԵՐԱՅԱՆԻ ԿՈՆԵՐՈՒՄ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

№ 6 ДИАЛЕКТЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА № 6

Р. А. БАГРАМЯН

ДИАЛЕКТНАЯ КАРТА ДЕРСИМА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԽՈՐՀԱՊԵՏՈՒՄ

№ 6 ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ № 6

Դ. Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ԴԵՐՍԻՄԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
հմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

«Դերսիմի բարբառային քարտեզը» հայերեն բարբառների
տեղային քարտեզ կազմելու անդրանիկ փորձ է: Այստեղ ուսում-
նասիրված են խարբերդ-Սրզնկայի բարբառի տերիտորիալ հատ-
վածներէց 1ի քանիսը՝ Ձմշկածագի, Բերիի ու Քղիի ենթաբար-
բառները և մի բառների բարբառը:

Աշխատութեան մեջ տրված քարտեզները կազմված են հըն-
չյունափոխութեան ու ձևաբանութեան համեմատական ֆոնո-
թյան հիման վրա: Յուրաքանչյուր տերիտորիալ խոսվածքից
բերված են նմուշներ, իսկ զբքի վերջում՝ բառաբաններ:

ԵՐԿՈՒ ԽՈՍԻ

1915 թ. եղեռնից մագապուրծ եղած դերսիմցի հայերը զբրկվելով մայր հողից և անցնելով աստանդական կյանքի «...տարիներու հուղուլյթին հետ, հյուրընկալ յուրաքանչյուր երկրի տեղական պայմաններու անմիջական ազդեցության տակ» մոռանում են իրենց բարբառը. «օտարության սպիտակ ջարգն»¹ էլ մյուս կողմից է սպառնում նրանց:

Սովետական Հայաստան գալով, նրանք դարձել են նոր, սոցիալիստական հայրենիքի ակտիվ քաղաքացիներ, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի առաջավոր մարտիկներ:

Բնակչության կուլտուրական առաջընթացին զուգընթաց զարգանում ու հաղթանակում է հայ ազգային գրական լեզուն, վերանում են բարբառները: Գնալով ավելի ու ավելի է դժվարանում նրանց հայտնաբերումն ու ուսումնասիրությունը: Հատկապես մեծ ջանքեր են պահանջում այն բարբառները, որոնք նիմնովին տեղահանվել ու զրկվել են մայր հողից. այստեղ արդեն անհնար է ուրվագծել ենթաբարբառներն ու գլխավոր խոսվածքները, եթե օգնության չգան մայրենի բարբառն իմացող անձինք:

Սույն աշխատությունը արդյունք է հայրենադարձ չմշկածագիների, մեծկերացիների, բերրիցիների, Ալթուն Հյուսեյն, Իսմայել և այլ գյուղերի նախկին բնակիչների մեզ ցույց տված սիրահոժար օգնության, որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում նրանց:

Մեր կազմած քարտեզի մեջ շատ գյուղերի խոսվածքներ մնում են անբոշ. կարծում ենք, որ այդ խոսվածքներով խոսող մեր ազգակիցները, որտեղ էլ նրանք ապրելիս լինեն, իրենց նյութերով կօգնեն լրացնելու այդ բացը:

¹ Ս. Գ. Երեանյան, *Պատմություն Չարսանհաղի հայոց, Բեյրութ, 1956*, էջ XII:

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դերսիմը Բարձր Հայքի արևմտյան մասն է, որ բռնում է Պոնտական լեռնաշղթայի գագաթնագծերից մեկի հարավային, Եփրատ գետի արևելյան, Արածանի գետակի հյուսիսային և Քղիի ու Դերջանի գավառակների արևմտյան մասում ընկած տարածությունը:

1878 թ. վարչական բաժանմամբ Դերսիմը մտնում էր Խարբերդի կուսակալության մեջ. իր հերթին նա բաժանված էր մի շարք գավառների ու գավառակների:

Աշխարհագրական տեսակետից ուսումնասիրվող շրջանը բաժանվում էր երկու մասի՝ լեռնային և դաշտային:

Լեռնային Դերսիմի Խուլթաց Ձորի շրջանում հայեր չկային. այստեղ ապրում էին քրդական ցեղեր, իսկ Տուժիկում, մոտ 70 հազար քրդերի հետ, ապրում էին նաև լոթ հազարի չափ հայեր, որոնք իրենց կոչում էին ոչ թե տեղանվամբ, այլ ցեղանվամբ՝ միրաք: մյուրաք կամ միրաքցի:

Մեծկերտում, Խոզաթում, Աղըլ-Քիլիսեում և մի քանի գյուղերում ապրում էին նաև Խարբերդից, Արաբկիրից, Ակնից, Չմշկածագից, Երզնկայից, Բալուից ու Քղիից գաղթած բազմաթիվ հայեր:

Լեռնային Դերսիմում հիմնական է միրաքների խոսվածքը, որ խոսվել է Հավլորի¹, Տեր Օվան, Թորոտ, Հազըս, Հարտիվ և այլ գյուղակներում ու վայրերում:

ՉՄՇԿԱԾԱԳԻ ԳՅՈՒՂՆԵՐԸ

Չմշկածագի գավառակը Դերսիմի արևմտյան սահմանն է, հին Հայաստանի Փոքր Մոփք գավառի մի մասը: Այս գավառակում եղել են հետևյալ հայկական գյուղերը.

¹ Բոլոր գյուղերի անունները պահել ենք ըստ քարտեզների ու տպագիր աղբյուրների:

Հաղարի	50 տուն	Կարմրի	40 տ.	Հարաչոր	25 տ.
Թումսա	40 տ.	Մուսնայի	35 տ.	Թումա մեղրե	75 տ.
Մեստան	60 տ.	Երեց Ագրակ	85 տ.	Պարտիզակ	25 տ.
Միսնա	35 տ.	Մորշխան	35 տ.	և այլն:	

Զմշկածագը (Յարոպոլիս, Չիմիշկեզեկ) 1914 թ. ունեւր 1500 տուն՝ 4000 բնակիչ:

Այստեղ էլ, ինչպես Թուրքիայի տիրակալութւան մլուս հալաքնակ գալառներում, շատ գլուղեր հիմնահատակ ավերվել են, բնակչութւունը բնաշնջվել է: Այսպես, Ագարակ գլուղը, որը Եի հրնուն հարիւրավոր տներէ բաղկացած գիւղ մ'էր¹ 1895 թ. կոտորածների ժամանակ ոչնչացավ:

Այդպես և Էփրիկեանի «Բնաշխարհիկ բառարան»-ում հիշվող Բաղրաթիլ (12 տ. հալ), Բալարուն (24 տ. հալ), Բաղչեհիկ (15 տ. հալ), Բնաբեղ, Հաղթուկ (28 տ. հալ), Բաղարան (26 տ.), Բարդի, Բրաստիք, Բրեխի (30 տ. հալ), Կաղնուտ, Մեղրե, Տիրավան և այլ գլուղերը, որոնք վերջին կոտորածի ժամանակ դատարկվեցին իսպառ:

Այս գլուղերի խոսվածքներով գրականութւուն չկա, միայն հայտնի է, որ գալառակի հայոց Վեղուն շատ մաքուր և գրեթէ անխառն բարբառ մ'է և խոսվում է ընտանեկան շրջաններում²:

Դաշտային Դերսիմն ընդգրկում էր Չարսանճագի գալառակները: Այս գալառակներում հայերը կազմում էին բնակչութւան ճշշող մասը: Ստորե տալիս ենք հալկական գլուղերի ցուցակը, լուրաքանչլուր գլուղի դիմաց նշելով տների (ծխերի) թիվը:

ԲԵՐԻԻ ԳՅՈՒՂԵՐԸ³

Պաղին—8	Ձորակ—17
Ճանիկ—12	Ուրճ—18
Խուշին—20	Հոշե—10
Էսերեկ—4	Շոռտան—10
Հայաչին—25	Գոտաուիճ—22
Խոզնագեղ—25	Դարմուտաղ—15

¹ Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, հտ. Ա., Վենետիկ, 1902:

² Անդրանիկ, Տէրսիմ, էջ 141:

³ Տվայները բերվում են ըստ Ս. Հայկունու «Արարատ», 1896 թ., Անդրանիկի «Տէրսիմ», Էփրիկեանի «Բնաշխարհիկ բառարան», Գ. Երեանյանի «Պատմութւուն Չարսանճագի հայոց» և այլ աղբյուրները համեմատելուց և ճշտելուց հետո:

Բաղնիք—15	Կօկթեփե—60
Տիւան օղլի—4	Գոտառիճ—20
Տանապուրուն—15	Կորճան—15
Հաղվան—15	Բերրի քղ.—650
Թիբրիշմեկ—25	Մրզեն—5
Հզլճուխ—20	Վերին Խաճար—10
Իսմայել—40	Գարնձոր—8
Շամլի—10	Քուրեքեն—20
Խուլաղսզ թիլ—16	Թիլ—25
Բասուն—21	Հալվալի—15
Վարի Խաճար—25	Համբ—16
Լալ մրզեն—7	

ԲԵՐԴԱԿԻ ԳՅՈՒՂՆԵՐԸ

Բալըշեր—15	Ուռեկ—16
Խորդման—25	Խաճար—25
Կատոսան—15	Բաշաղակ—100
Նորգեղ—15	Երկան—15
Սաղման—25	Սարեսիկ—25
Վերի Չամպաղ—10	Վասակակերտ—25
Մեռճիմեկ—32	Թիլ—25
Քերդակ—300	Վալնա—18
Վարի Հավսեկ—15	Սվճող—30
Վերի Հավսեկ—18	Խոնեկ—20
Ղարաբունար—8	Լուսաթառիճ—20
Թանց—15	Խաճար—10
Սուրբ Օհան—20	Սմախ—10
Մրզեն—20	Տաղման—20
Վարի Չմբղ—10	

ՔՂԻԻ ԳՅՈՒՂՆԵՐԸ

Քղիի, ինչպիս և Դերջանի գավառները՝ թուրքական վարչական բաժանմամբ, մտել են Էրզրումի նահանգի (վիլայեթի) մեջ. դրանք Դերսիմի արևելյան սահմանակիցներն են։ Քղիի կամ Չորրորդ Հալքի Խորճեան գավառի սահմանները 1910 թ. տարածվել են արևելքից մինչև Խնուսի, հյուսիսից՝ Դերջանի, արևմուտքից՝ Չարսանճաղի գավառները, իսկ հարավից՝ Բիթլիսի վիլայեթը։

1910 թ. տվյալներով՝ Քղիի գավառն ունեցել է 206 գյուղ, որոնցից 50 հայաբնակ, իսկ մյուսները՝ քրդական: Սկզբնական Քղին բազմամարդ հայաբնակ քաղաք է եղել Հագոստուն գյուղի մոտ. 1616 թ. երկրաշարժից քաղաքն ավերվել է. կենդանի մնացած հայերը հիմնել են նոր Քղին:

Քղիի գավառում, մինչև հայկական վերջին ջարդն ու տեղահանությունը, կային 10 գուև հայաբնակ և 40 հայ, թուրք կամ քուրդ բնակիչներով գյուղեր: Ստորև տալիս ենք այդ գյուղերի ցուցակը, նրանցում բնակված բնակիչների քանակով հանդերձ:

Գյուղի անունը	հայ տուն	շունչ	մահմեդական շունչ
1	2	3	4
1. Դարման	350	2450	40
2. Քղի	350	2450	1050
3. Խուբս	250	1400	—
4. Առեք	150	1050	—
5. Ճերմակ	150	1050	70
6. Աստղաբերդ	130	910	100
7. Չահանգչի	100	700	15
8. Սերկեիլ	92	644	120
9. Հերդիֆ	90	630	—
10. Օրոր	90	630	140
11. Օսնակ	80	560	350
12. Մագաձոր	60	420	—
13. Քերպոզ	50	350	72
14. Հագոստուն	50	350	—
15. Հոդաս	50	350	100
16. Ճըպլըր	50	350	6
17. Ապողնակ	45	315	—
18. Խարապեք	40	280	—
19. Լըզիկ	40	280	70
20. Մեկիբան	40	280	—
21. Չիֆթլիկ	35	245	—
22. Չան	30	210	160
23. Ասինջ	30	210	—
24. Ագարակ	30	210	25
25. Ամառիճ	27	175	35
26. Ջերման	27	175	400
27. Ավրտնիկ	20	140	174
28. Աղաշի շենլիկ	26	140	35
29. Խուպեք	20	140	105
30. Տինեկ	18	126	7
31. Յուլմեջ	18	126	160
32. Ակիպիվան	18	126	6
33. Ղազի	15	105	168

՝ Ա—ԴՕ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912:

	1	2	3	4
34. Զլպե մղբե		15	105	415
35. Սեղանք		15	105	49
36. Խոշքար		15	105	37
37. Գլխալուկ		15	105	105
38. Շարուկ		15	105	—
39. Զարիպաշ		15	105	35
40. Աղբյուր		15	105	35
41. Ալթուն չուսեյն		10	70	35
42. Շեն		10	70	70
43. Խաչաթուր		8	56	130
44. Զումար		7	50	90
45. Լքք		5	35	110
46. Հոլենք		5	35	385
47. Ինախ		5	35	350
48. Հոլնոլ		2	14	686
49. Հարկապ		2	14	265
50. Խասդուղ		2	14	269
	Ընդամենը՝	2676	18.700	

ԴԵՐՋԱՆԻ ԳՅՈՒՂՆԵՐԸ¹

Խումար—30 տուն	Հուրդոլ—30 տուն
Սարիգալա—100	Ապրանք—40
Զխնրա—60	Գոփուր—100
Աղաթեբ—20	Զանաղչի—8
Հիրանի—7	Ծաղկարի—60
Խարխին—25	Վիժան—20
Վերին Խաղաղ—8	Աստույի գոմ—10
Ներքին Խաղաղ—30	Դֆրիկ—60
Փրկիչ—100	Հողեք—60
Բազաուիճ—150	Վարդուկ—30
Խաչիկ օղլու գոմ—18	Զամուր դերե—15
Մանց—60	Գառնի-Բերդակ—25
Ագրակ—12	Հերունի—3
Բուլք—120	Էսպեվերեք—15
Գարագուլաք—6	Խնդլը—25
Խասգեղ—50	

ՄԱՏԵՆԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

Դերսիմի խոսվածքների վերաբերյալ աղբյուրները շատ քիչ են, եղածները բերում ենք ստորև:

¹ Տվյալները բերում ենք ըստ Ա—ԴՕ-ի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» գրքի, Երևան, 1912:

ՄԻՐԱՔՆՆՐԻ ԲԱՐՐԱՌ

- Ս. Հայկունի, *Դէրսիմ, հոգւած, «Արարատ», 1896, էջ 84—86, 133—134, 183—185:*
Անդրանիկ, *Տէրսիմ, ճանապարհորդութիւն և տեղագրութիւն, Տփլիս, 1900:*

ՉԱՐՍԱՆՃԱԳԻ ԵՆԹԱԲԱՐՐԱՌ

- Ս. Հայկունի, *Մօքոս, Էջմիածին, 1896: «Ժողովրդական հեքիաթներ (11 հատ), Էմինյան ազգագրական ժողովածու», հտ. Բ, 1901, Հոկտեմբեր և Սամէլ Հօվիկ, Էջմիածին, 1895:*
Գ. Ս. Երևանյան, *Պատմութիւն Չարսանճաղի հալոց, Բեյրութ, 1956:*

ՔՂԻԻ ԵՆԹԱԲԱՐՐԱՌ

- «Բիւրակն», 1898, էջ 75, 201, 314,—316, 345—346, 372—373, 809, 810: 1899, էջ 554:*
«Էմինյան ազգագրական ժողովածու», հտտ. 2., 1906 (մեկ նմուշ):
Լ. Սրապյան, *Տետր № 1, 1898, Գալառական բառերու (միմիայն Քղիի գոսապալէն):*
Լ. Սրապյան, *Տետր № 2, 1900, Գալառական բառերու (միմիայն Քղիի գոսապալէն):*

ԽԱՐԲԵՐԴ—ԵՐՋՆԿԱՅԻ ԲԱՐԲԱՌԸ

Մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանի բաժանմամբ այս բարբառով խոսել են Եփրատ գետի հոսանքի արեելյան, Պոնտական լեռնաշղթայի հարավային դադաթնագծի, Կարնո և Մշո բարբառների արեւմտյան և Տիգրանակերտի բարբառի հյուսիսային սահմանագծերի միջև ընկած տերիտորիայում ապրող բնակիչները:

«Ընդհանրապես խոսելով,— գրում է Հ. Աճառյանը,— Խարբերդի և Երզնկայի բարբառը Կը ճյուղի բարբառների մեջ ամենից ավելի հավատարիմն է գրական հայերենին, ճիշտ ինչպես Երևանի բարբառը Ում ճյուղի բարբառների մեջ»¹:

Մենք նպատակ և հավակնություն չունենք ներկայացնելու այդ բարբառի որևէ չափով ամբողջական ուսումնասիրությունը. ստորև կանգ կառնենք այդ բարբառի հիմնական հատկանիշների վրա, նրա տերիտորիալ հատվածներից մեկի՝ 'Իերսիմի բարբառային քարտեզը գծելու, ենթաբարբառներն ու գլխավոր խոսվածքները բնութագրելու համար:

Խարբերդի բարբառն ունի լոթ ձայնավոր. ա, ան, ե, ը, ի, ու, օ

Ա ձայնավորը սովորաբար միում է անհնչյունափոխ: Մի շարք բառերում ա-ն ենթարկվել է մասնավոր փոփոխության: Այսպես.

Ա> Է. էնիլ—առնել, բէհէլ—պահել:

Ա> ան. անիրա—ամիրայ, անանջ, անանջ—առաջ, դանլ—դատ, թարթիլ—թարթիլ, անրիլ—ծարիլ, ձըանր—ծրար, գանթ—կաթ, դանշանք—կաշառք, գանաքանգ—կասկարալ, շանրիլ—շարիլ, հանիլ—հալիլ, ջանշ—ճաշ, մանգէթիլ—մազտաքէ:

Ա> Ը. ընիլ—անկանիլ, ընգողին—անկողին, արքըրիլ—ապրսպարեկ, ըրնց—առանց, ըսիլ—ասել, արցըզիլ—արձակիլ, մարքըրիլ—մարգարիտ, սարսըփիլ—սարսափել, ցըցընիլ—ցուցանել, քընց—քանգ:

¹ Հ. Աճառյան. Հայոց լեզվի ոլատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 343:

Ա>— աբրուջան—ապարանջան, թէզնիք—թեզանիք, թօլնալ—թու-
լանալ, լօգնալ—լոգանալ, դաղբար—կաղապար, համբրիլ—հա-
մարիլ, ուսնիլ—ուսանիլ, բաննիլ—սպանանել, դաբգիլ—տա-
պակել:

Ա> օ. շօխգամ—շաղգամ:

Ե ձայնավորը միավանկ բառերի սկզբում դարձել է յե.
լէզ—եզն, լէս—ես, լերք—երգ, իսկ մյուս դեպքերում՝ ե. էգէդէ-
ցի—եկեղեցի, էղինջ—եղիճ, էրած—երազ, էրանի—երանի, էր-
թում—երդումն, էրէս—երես, էրէրալ—երերալ, էրգաթ—երկաթ.
էրգինք—երկին(ք), էփիլ—եփել, թէրթ—թերթ և այլն:

Գրական լեզվի ազդեցութեամբ մի քանի բազմավանկ բառե-
րում ե-ն դարձել է յե, լէթիսգօրօս—եպիսկոպոս:

Մասնավոր հնչյունափոխութեան դեպքեր են.

Ե> ան. ան—բեռն, անքան—եղբայր, անջիր—եղջիր, անք—եռք,
անսուն—երեսուն, թան—թեռ Վրդե թեւ, լիսան—լիսեռն,
ձման—ձմեռն, քանի—քեռի: Նկատելի է, որ Ե> ան փոփո-
խութիւնը տեղի է ունենում ա-ից առաջ:

Ե> ք. ըղունգ—եղունգն, թըթըռնուզ—թիթեռն (ուկ):

Ե> ր. իրիգուն—երեկ(ուկ), իրէք—երեք, գիրազ—կեռաս:

Ե>— զըռնալ—կարենալ, հանլի—հախելի, վըրա-ի վերալ, փէռ-
գէլ—փեռեկել:

Ե ձայնավորը հնչյունափոխութեան չի ենթարկւում. մասնա-
վոր փոփոխութիւն են ներկայացնում հետեւյալ բառերը.

Ե> ա, ք, ան. թա կամ դը—թէ, չանջ—չէջ:

Ե> ր. խիթ—խէթ, ճիթ—ձէթ:

Ի ձայնավորը սովորաբար անհնչյունափոխ է. մասնավոր
հնչյունափոխութեան դեպքեր են.

Ի> ք. շարվէդ—շառաւիղ, ջէդ—ջիլ

Ի> ք. թըթըռնուզ—թիթեռն(ուկ), լըզիլ—լիզել, ձըձըռնիգ—ծի-
ծեռն(իկ), հըմը—հիմալ, հընհընալ—հինինալ, նախըռ—նախիր,
վըջազ—վիճակ:

Համեկլալ Ի ունենք ջիջի—ճճի, ջիշմաքիդ—ճշմարիտ, ջի-
քաք—ճրագ, նիզիկ—սկի՛ բառերում:

Ո ձայնավորը ամեն դեպքում արտասանւում է օ. մասնավոր
հնչյունափոխութիւն են ներկայացնում հետեւյալ բառերը.

Ո> ու. ալուշ—ալոճ, նուր—նոր, ուրուշ—որոշ:

Ո> ք. գ'ըլգըրիլ—գլորիլ, դընդըղուց—դոնդող, խօսվիլ—խորովիլ,
դըռփալ—արոփել:

Ո> վօ, վի. վօվ, վէվ—ով, վէր—որ:

Ո> ա. մառնալ—մոռնալ:

Ու ձաշնավորը նուշնալեա անհնչունափոխ է.

Մի քանի բառերում ու-ն ենթարկվել է փոփոխութեան.

Ու> օ. գագօղ—կակող, գանօխ—կանուխ, գըլօխ—գըլուխ, սօրս—սուսր,

Ու> —. խրրգէլ—ուղարկել:

Ու> է. դէղդ—աուղա:

Հափելլալ ու ունենք գուռուն—գուռն, բուղուգ—պտուկ բառերում:

Աշխատի, Խարբերդի բարբառի ձայնավորները սովորաբար հնչյունափոխութեան չեն ենթարկվում, եղած դեպքերն էլ մասնավոր են:

Խարբերդի բարբառը երկբարբառներ չունի, իսկ գրաբարյան երկբարբառներին այստեղ համապատասխանում են մեծ մասամբ պարզ ձայնավորներ:

Այ> ան. քնլ—գալլ, անքանլ—եղբայր, լան—լաշն, անլ—ծալր, քանլ—կալթ, հան—հալս, ջանլիլ—ճալթիլ, մանլ—մալր, սանլ—սալլ, փանլիլ—փալլիլ, փանլ—փալտ, քանլիլ—քալլիլ և այլն:

Այ> ա. էրգան—երկաշն, խաթէլ—խալթիլ, խաղուդիգ—խալտ(ուտիկ), ձաթիլ—ցալտիկ:

Աւ> օ. օձիլ—օժիլ, օց—օձ, օղ, օր, օղշիլ—օրհնիլ, աղօթ—աղօթ(ք), արօս, հարօր—արօր, թօշիլ, լօշ, խօսգ—խօս(ք), մօղ—մօտ, մօրուք, դօն—տօն:

Աւ> ու. ունք—լօնք և թափուռ—թափօր բառերում:

Եա> ան. ա. լան—լեան, քանք—կեանք, գիրիրան—կրեալ:
> է. լերթ—լեարդ, գօրէգ—կորեակ, սարէք—սարեակ, շէմ—սեամ, վառէք—վառեակ, ցօրէն—ցորեան, մէռէլ—մեռեալ:

Իւ> ի. ալիր—ալիւր, ախրիր—աղբիւր, անրին—արիւն, ախշիր—եղջիւր, իրէն—իւր, խիս—խիւս, գիրագէ—կիրակէ, հարիր—հարիւր, հէրին—հերիւն, հիսիլ—հիւսել, հիսիս—հիւսիս: Զիւք և ձիւն բառերն ունեն և՛ ձիւք, ձիւն և՛ ձիւք, ձիւն հնչյուններ:

Մասնավոր փոփոխութիւն են ներկայացնում. զիլ—գիւղ, յիլ—իւղ, ջիլ—ճիւղ, շիլ—շիւղ, ինչպես նաև մանուկ—միւսուն, սօն—սին, գօր—գիւր, բիլլուր—բիւր բառերը, որոնց մեջ իւ դարձել է է, օ, իլու, ան:

Ոյ> օ. բօն—բոն, փօթ—բոլթ, ընգօգ—ընկոյգ, թօլ—թոլլ, խօլ—խոլլ, հանգօղ—հանգոյց, բայրօք—պատրոյք, բայրօս—պատրոյս, քօր—քոյր, լօս—լոյս, գօն—գոն:

Ա) > ու. արդուգիգ՝—արտույտ(իկ), զրուցք—զրույց(ք), գուրգուրալ
 ճխարխափեի՝ (կոչը արմատից), օխջուն—ողջոյն, ուժ—ուժ:
 Ուա երկբարբառով մեր ունեցած օրինակները շատ քիչ են և ան-
 միօրինակ. զիժար—դժուար, նրվալ—նուալ, շուվան—չուան,
 դաւար—տուար:

Ուե > վե. աղվէս—աղուէս, բաղվէր—պատուէր:

Գրաբարի բաղաձայնական վիճակի համեմատութեամբ այս-
 տեղ աղելացել են վ՛, ք՛ քմայինները և ֆ. բառասկզբի ձայնեղ
 պայթականներին համապատասխանում են շնչեղ ձայնեղ, իսկ խուլ
 պայթականներին՝ ձայնեղ պայթականներ, որով բարբառը ներկա-
 յացնում է եռաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ:

Ըստ այդմ ձայնեղների դիմաց ունենք շնչեղ ձայնեղներ:

Բ > բ՛. բ՛ազմիլ—բազմիլ, բ՛ան—բան, բ՛էրան—բերան, բ՛օլօր—բու-
 լոր, բ՛օղգ—բողկ, բ՛ուգ—բուկ և այլն:

Գ > գ՛. գ՛ալ—գալ, գ՛էդին—գետին: գ՛ըգէլ—գզել, գ՛ին—գին, գ՛ըդ-
 նիլ—գտանել, գ՛օմ—գոմ, գ՛ունդ—գունդ, գ՛ազան—գազան և
 այլն:

Դ > դ՛. դ՛անագ—դանակ, դ՛ըդում—դդում, դ՛էդին—դեդին, զիժար—
 դժուար, դ՛նիլ—դնել, դ՛ըբրօց—դպրոց:

Ձ > ձ՛. ձ՛ար—ձար, ձ՛ին—ձի, ձ՛ման—ձմեռն, ձ՛օղ—ձող, ձ՛ուգ—
 ձուկն:

Ջ > ջ՛. ջ՛ալ—ջահ, ջ՛օրի—ջորի, ջ՛ուր—ջուր:

Դրաբարի խուլ պայթականների դիմաց բարբառս ունի ձայ-
 նեղ պայթականներ:

Պ > բ. բաբանձիլ—պապանձել, բադիվ—պատիւ, արըսբըրիլ—ապը-
 պարել, գաբօդ—կապույտ:

Կ > գ. գախել—կախել, գարբէդ—կտպերտ, գըսգիձ—կսկիժ, ագիշ—
 ակիշ, ճըմէրուգ—ձմեռուկ:

Տ > դ. դախդագ—տախտակ, դարգիլ—տապակել, դէղդ—տուղա,
 բադարաք—պատարադ, բադ—պատ:

Ծ > ճ. ձաձուգ—ժաժուկ, ձէձ—ժէժ, ձիձալ—ժիժալ, ձուռ—ժուռ,
 արձիլ—արածիլ:

Ճ > շ. շագադ—ճակատ, շիվ—ճիւ, աղջադէլ—աղճատել, աջուդ—
 աճուկ, դարշ—կարճ:

Որպես կանոն, բարբառային գ հնչյունը դառնում է գ՛, բոլոր
 այն դեպքերում, երբ այն հաջորդում է և և ի ձայնավորներին.
 աղեգ՝—աղէկ, արդուդիգ՝—արտուտիկ, եգ՛եղեցի—եկեղեցի, ե-
 րեգ՝—երեկ, գաղիգ՝—գատիկ և այլն:

Գրական լեզվի նորմայով, ր-ից հետո եկող ձայնեղ պայթա-
կանները հնչվում են խուլ շնչեղ, օրինակ՝ մարթ—մարդ, օրփ—
որբ, առչ—արջ, վարթ—վարդ, վարթարեղ—վարդապետ, գարքիլ—
կարգիլ, արցըգիլ—արձակիլ, վերչ—վերջ:

Արդպես նաև բառավերջում՝ ձայնավորներից հետո, առեչ—
ատեչ, բայթօր—պատրոյգ, ջիրար—ճրագ և այլն:

Ծանոթութիւն.— Ակադեմիկոս Հ. Աճառյանի Արմատական
բառարանում Խարբեղդի բարբառի համար բերված օրինակ-
ներում ր, դ բաղաձայններից հետո և բառավերջում եղած ձայ-
նեղ պայթականները տառադարձվում են շնչեղ ձայնեղի նը-
շաններով, օրինակ՝ ախջիր<եղջիր, ախրիր<աղբիր, խէխ-
դիլ<խեղդիլ, աբէթ<աբիթ, խարիլ<խաբիլ, դադադ<դա-
դադ, բիր<բեր, ձադ<ձագ, զօդ<զոյդ:

Հիշյալ գեպքերում շնչեղ ձայնեղ բաղաձայնների շեշտված
արտասանության մենք չենք հանդիպել:

Չուտ արեմտահայ գրական լեզվի ձևով են փօթ—բոյթ, ամ-
փարգավան—ամբարտաւան, արի—ազի, քերան—գերան, հօքալ—
հոգալ:

Մյուս բաղաձայնները սովորաբար մնում են անփոփոխ, մի-
այն նկատելի են հետևյալ մասնավոր կանոնները.

ա) Բոլոր այն գեպքերում, երբ ք-ն հաջորդում է ի, է ձայ-
նավորներին, արտասանվում է ք'. քեզնիք՝—թեզանիք, հերիք՝—
հերիք, վարդիք՝—վարտիք:

Չունենալով իր քմայինը, կ բաղաձայնը հաջորդելով է, ի ձայ-
նավորներին, վեր է ածվում ք՝-ի. սեք՝—սեկ, սարեք՝—սերեկ,
վառեք՝—վառեակ, կամ դառնալով գ, նույն պարագայում վեր է
ածվում քմային գ՝-ի, որի մասին ասվեց վերը:

Ք> գ փոփոխության համար ունենք ախգադ—աղքատ, ա-
ղօթգ—աղօթ(ք), ջեխգ—ճեղք, մեշգ—մէջք, գախանա—քահանայ:

բ) Ղ-ով և ձայնեղ պայթականով կազմված բաղաձայնական
խմբերում ղ-ն դառնում է լո.

Ախրիր—աղբիր, ախջիր—եղջիր, ախրար—եղբայր, խէխ-
դիլ—խեղդիլ, խախր—հաղբ, օխբալ—ողբալ, օխշուն—ողջոյն, բ՛ը-
խալ—բղիկ, շընգըխիլ—շնկղիլ, գունցխ—գուռգ:

գ) Մի քանի բաղաձայններից առաջ կ-ն դառնում է յ. մեկ-
նեկ—մեկնեկ, մըլլադ—մկրատ, բ՛այլա—բակլալ, քայվիլ—քակուիլ:

դ) Հաջորդական և-ի նմանողութեամբ ա-ն վեր է ածվում և-ի, գրննել—գտ(ա)նել, մըննել—մտ(ա)նել:

ե) Բ-ի մոտ, մի շարք բառերում, և-ն ընկնում է կամ վերածվում է յ-ի. թարգ—թանձր, մայր, մայրել—մանր, ձայր—ծանր, սայր—սանր:

զ) Բառակցքի սպ և սա հնչյունախմբերի ա-ն ընկնում է. քիգադ—սպիտակ, բիդդիլ—սպիտակել, բաննէլ—սպանանել, դէդ-ձէլ—ստեղծել, գէրչ—ստերչ, գաբդին—ստեպդին:

է) Բառավերջի և-ն կամ չի արտասանվում, իսկ այդ լինում է ր-ից հետո, կամ էլ դառնում է յ. աշխար—աշխարհ, ր'այ—բահ, ազգայ—ագահ, շայ—շահ: Ձայնավորով սկսվող մի քանի բառերում ավելանում է և. հազնիլ—ագանիլ, հալվօր—ալեօր, հարօր—արօր, հըյրիլ—ընտրիլ (վերջին օրինակի համար հմմ. սանր. մանր բառերը):

ը) Բառակցքի գրարարյան յ-ն այս բարբառում ընկել է. աջօղիլ—լաջօղիլ, ազագ—լատակ, եզի—լետ, իշիլ—լիշել, օրինել—յօրինել, օծար—յօծար:

թ) >վ փոփոխությունից հետո, ավելի շրթնայնացման ճանապարհով, վ-ն դառնում է ֆ. մի քանի բառերում օ-ին նախորդող և-ն դառնում է նույնպես ֆ. հարաֆ—հարաւ, հաֆսար—հաւասար, հեֆալ—հեալ, ֆօզ—հոզ, բադիֆօն—պատահան:

Պարբերդի բարբառում գոյական անունների հոգնակին կազմելվում է եր, նիւր, նե մասնիկներով: Էր ստանում են միավանկ բառերը, իսկ ներ, նի՝ բազմավանկ բառերը:

Սահմանափակ թվով բառերի համար, որպես հոգնակի կազմող մասնիկներ, գործ են ածվում նաև հետևյալները.

Դի կարող են ստանալ երկվանկ բառերը. աման—ամրնդի, նաև ամաննի || ամըննի, չուվան—չուվընդի, նաև՝ չուվըննի, գավառ ջըրուդի—գավըդի նաև՝ գավըննի:

Վի, վընի ստանում են մարմնի գույգ անդամ ցուլց տվող բառերը. ջանգ «ճանկ»—ջանգվի, ջանդվընի, օզք «ոտք»—օզվի, օզվընի, ճ'նոք «ձեռք»—ձէռվընի, ունք—ընքվի, ընքընի, անգաջ «ականջ»—անգըջվի, անգըջվընի:

Վանք, վան, վըգաք, վըգիք, ան. վէդ «գլուղ»—գէղան, գէդ-վանք, դէդ «տեղ»—դէղան, դէդվանք, դէր «տեղ»—դիրվան, դիրան, էշ—իշվան, իշվի, իշվընի, իշվըդի, իշվըգաք, ճ'նոք—ձէռվան, ճ'ի—ձ'իան, դի—գդին, կողմ—վիան, քօր «քույր»—քուրվըգաք, քուրվըդիք և այլն:

Սարքերդի բարբառն ունի վեց հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, դործիական. տրականը միշտ նման է սեռականին, իսկ հայցականը՝ ուղղականին, առանց շնչավոր և անշունչ առարկաների տարբերութեան:

Բացառականը կազմվում է և մասնիկով, բացի անձ ցույց տվող բառերից, որոնք ունենում են — մընե մասնիկ. օր. բարուամընէ, թօրկանցմընէ: Դործիականը լինում է օվ վերջավորութեամբ:

Իերանուն

Անձնական

Ուղղ. —	լես	զուն	մէք, մէնք	զուք
Սեռ. —	իմ	քու	մէր	ձէր
Տր. —	ինձ(ի)	քեզի	մէզի, մըզի	ձիզի, ցըզի
	ինձ	քըզի	միզի	(տըզի, ձըզի)
Հայց. —	ինձիս	քէզի		ձէզ
	ընձիս	քէզ	»	ձիզի, ծըզի
Բաց. —	իմմընէ	քըզիմէն	մէրմընէ	ձէրմիւնէ
	իմիւնէ	քումիւնէ	մէրմիւնէ	ձէրմընէ
	ինձիմէն	քումընէ	մըզիմէն	ծըզիմէն
Դործ. —	ինձմօվ	քէզմօվ	մէզմօվ	ծըզիմօվ
	ինձիմօվ	քըզիմօվ	մըզմօվ	ձէզմօվ

Ցուցական

Ուղղ. հլց. —	ընի,	անի,	ըսոնք,	անօնք
Սեռ. —	ընօր,	անօր,	ընօնց,	անօնց
Տր. —	»	»	»	»
Բաց. —	ընօրմիւնէ,	ընօնցմիւնէ,	անօնցմէ	
	անօրմէն,	անգից	»	ընգից
Դործ. —	ընգօրմօվ,	ընօնցմօվ,	անօնցմօվ,	
	անօրմօվ,	անօվ		

Այսպէս են հոլովվում ըսի || ասի, քդի || անդի, ըսօնք || անօնք, ընդօնք || անդօնք դերանունները:

Ուղղ. —	սըվի,	սըվօնք
Սեռ. —	ար. —	սըվօր, սըվօնց
Բաց. —	սըվիւնց,	սըվօնցմէ
Դործ. —	սըվօվ,	սըվօնցմօվ

Այսպէս են հոլովվում նըվի, դըվի, նըվօնք, դըվօնք դերանունները:

Օժանդակ բալի ձեռքը.

Ներկա— իմ, էս, ան, ինք՛, էք՛, էն.

Անկատար— էի, էիր, էր. էինք՛, էիք՛, էին:

Բալի եղանակներն են՝ սահմանական, հրամայական, րդձական, հարկադրական և պալմանական կամ թեական:

Հարկադրականի եղանակին է զը մասնիկը, որ ստացվել է պիտի ձեռք, որը, սակայն, պ>վ փոփոխությունը լրիվ ձևով պահվում է ժխտական խոնարհման ձեռքում, օրինակ՝ չըվգի լսողամ:

Թեական եղանակը կազմվում է նե մասնիկով, որ լինում է խոնարհվող բալին հտադաս:

Սահմանական եղանակը սովորական ներկայից ու անցյալ կատարյալից բացի ունի նաև ներկայի ու անցյալ կատարյալի շարունակական, որոնք կազմվում են սովորական ներկայի ու անցյալ կատարյալի ձեռքի և նե մասնիկի հարադրմամբ:

Ծանոթ ու թյուն.— Ուշադրով են և, որ, թե շարկապների իմաստով և բալի մի շարք երկրորդական ժամանակներ կազմող ալք նե մասնիկի իմաստալին երանգներն ու ծագումը:

Հայտնի է, որ նե մասնիկը իմաստալին տարբեր երանգներով գործ է ածվում նաև մի քանի ուրիշ բարբառներում, ալսպես, Արարկիբի բարբառում ալք մասնիկը նը ձևով գործ է ածվում իրբև շարունակականի կազմիչ. օրինակ, գէրթամ նը, խըմիմ նը և ալն:

Նույն մասնիկը նա ձևով գործ է ածվում Համշենի բարբառում ապառնիի (ստորադասական) և հորդորական հրամայական կազմելու համար. ալսպես, (էգէրէմ) ր'երիմ նա «եթե բերեմ», (էգէրէմ) ր'երեյզը նա «եթե բերեիր», ր'երիս նա «եթե կարելի է՝ բէր»:

Ալք մասնիկն ունեցող բարբառների մեծ մասում սովորական է թեական իմաստով և բալաձեին հտադաս գործածությունը. օրինակ՝ կը տեսնեմ նե, եգեր ես նե, չուգեր նե և ալն: Սակայն կան բարբառներ էլ, որոնք, արևատահալ գրական լեզվի նման ալք մասնիկը գործ են ածում բալաձեին նախադաս և, որպես շարկապ:

Գրականության մեջ ալս մասնիկն առաջին անգամ հիշատակվում է ԺԳ դարից.

«Յղարկեց ի հետ թէ տո՛ւր զփախստականդ. նա վախեցին որ թալթարն չլցուեր չերկիրս՝ տուին. նա ոխացաւ սուլտանն և ամէն

Տաճկունք, ժողովեաց հեծել, մատա ընդ լեռոն ի վայր»¹: Բայց և «Թե անհոգ կենայ տէր ծառոյն, նա չորանայ ծառն»²:

Այս օրինակներից երեւում է, որ XIII դարում նա մասնիկը գործ էր անում թե՛ գլխավոր և թե՛ երկրորդական նախադասութեան սկզբում:

Այսպիսով, նա մասնիկը գործ է անում հինգ և ավելի իմաստներով՝ որպես և շաղկապ, որպես թեմական մասնիկ «իթե», «ու» իմաստով, օրինակ՝ «Ժառին տէրը անհոգ կենա նէ, ծառը կը չօրանա», որպես հորդորական կամ մեղմ հրամայական, որպես ստորադասական ապաստի, իսկ ինչպես ցույց են տալիս Բալուի բարբառն ու Չմշկածագի, Բերրի և մյուս կնիթաբարբառները, նաև որպես հարցական անցյալ կատարյալ:

Մասնիկի այս բազմիմաստությունը և նրա կրած ձևափոխությունները՝ նա, նայ, նը, նե, ընը լիովին հաստատում են բաղմամբուտ հայագետ Ա. Այտընյանի այն պնդումը, որ նա մասնիկը ոչ մի կապ չունի տաճկերենի հետ, «այլ բավական հին ալ է հայերեն լեզվի մեջ և գուցե ամենահին» (նույն գիրք, էջ 99):

Արմատական բառարանից հայտնի է, որ նա արմատը ծագում է հնդեվրոպական նախամայր լեզվի ո՞ «այն» դերանվանական արմատից, որ պրաբարում գործ էր անում որպես երրորդ դեմքին մոտ առարկան ցույց տվող ցուցական դերանուն և որպես շաղկապ «արդ, արդեն իսկ, մանավանդ» իմաստներով, օր. նա զի «մանավանդ», նա ուրեմն «բայց արդ»:

Ցեղակից լեզուներից այդ արմատը գիտեն լատիներենը enim «այսինքն», ne, nae «իրոք», nempe «քնականաբար» իմաստներով, ումբրերենը՝ eine «և», enem «երբ, աչնժամ» իմաստներով, հունարենը, vñ, vai «այո», սանսկրիտերենը՝ anō «արդարև», na «իսկույն», լիտվերենը՝ nei «իսկույն», հին սլավոներենը՝ nego, neže «հենց» իմաստներով, որոնք մատնանշում են մեր բարբառներում վերը թվարկված իմաստները:

Արդ, համեմատությունը ցույց է տալիս, որ նա մասնիկի մակբայական իմաստը պրաբարում ժառանգություն է հնագույն հայերենից:

Միջին հայերենում պահպանված շաղկապական իմաստը, չնայած պրաբարը չի պահպանել, բայց այն նույնպես գալիս է հնագույն ժամանակներից:

¹ Ա. Այտընյան, Քննական քերականություն, էջ 99:

² Նույն տեղում:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն . — Հայտնի է, որ բալի-սահմանական ներկան
 կը թ մասնիկով կազմող բարբառներէց շատերում միավանկ
 բայերը կը թ գր-ի փոխարին ունենում են կու թ գու: Այդ երե-
 վույթն ախտեղ ալնքան է առաջ գնացել, որ տարածվել է նաև
 դրական խոնարհման հարկադրական եղանակի ու ժխտական
 խոնարհման ձևերի վրա, այսպես.

գուգամ, գուգամ, գուլամ
 գուգամ, գուգամ, գուլամ
 մո'ւգար, մո'ւգար, մո'ւլար
 չուգար, չուգար, չուլար:
 է խոնարհում — ուղիլ, գըրիլ

Սահմանական եղանակ

Ն երկա

անց. անհատար

Գուզիմ	գը գ'ըրիմ	գուզէի	գը գ'ըրէի
Գուզէս	» գ'ըրէս	գուզէիր	» գ'ըրէիր
Գուզո՞	» գ'ըրո՞	գուզէր	» գ'ըրէր
Գուզինք՝	» գ'ըրինք՝	գուզէինք՝	» գ'ըրէինք՝
Գուզէք՝	» գ'ըրէք՝	գուզէիք՝	» գ'ըրէիք՝
Գուզէն	» գ'ըրէն	գուզէին	» գ'ըրէին

Ն երկա չի շարունակ. — գուզիմ նէ, գուզէս նէ, գուզո՞ նէ և այլն:

գը գ'ըրիմ նէ, գը գ'ըրէս նէ, գը գ'ըրո՞ նէ

Վաղակատար — ուզէր, գ'ըրէր, իմ, էս, ան. ինք՝, էք՝, էն

Անց. վաղակատար — ուզէր, գ'ըրէր, էի, էիր, էր. էինք՝, էիք՝, էին

Հարակատար — ուզած, գ'ըրած, իմ, էս, ան. ինք՝, էք՝, էն

Անց. հարակատար — ուզած, գ'ըրած, էի, էիր, էր. էինք՝, էիք՝, էին

Անց. կատարյալ. — ուզէցի, ուզէցիր, ուզէց. ուզէցինք՝

ուզէցիք՝, ուզէցին

գ'ըրէցի, գ'ըրէցիր, գ'ըրէց. գ'ըրէցինք՝

գ'ըրէցիք՝, գ'ըրէցին

Անց. կատարյալի շարունակ. — ուզէցի նէ, ուզէցիր նէ, ուզէց նէ...

գ'ըրէցի նէ, գ'ըրէցիր նէ, գ'ըրէց նէ

Հրամայական եղանակ

ուզո՞ — ուզէցէ՛ք՝, գ'ըրո՞ — գ'ըրէցէ՛ք՝

Ըղծական եղանակ

Ապառնի. — ուզիմ, ուզէս, ուզո՞. ուզինք՝, ուզէք, ուզէն,
 գ'ըրիմ, գ'ըրէս, գ'ըրո՞, գ'ըրինք՝, գ'ըրէք, գ'ըրէն

Անց. ապառնի—ուզէի, ուզէիր, ուզէր. ուզէինք, ուզէիք, ուզէին,
գ'ըրէի, գ'ըրէիր, գ'ըրէր. գ'ըրէինք, գ'ըրէիք, գ'ըրէին

Հարկադրական եղանակ

Ապառնի—դուզիմ, դուզես, դուզմ. դուզինք, դուզէք...
դը գ'ըրիմ, դը գ'ըրես, դը գ'ըրմ. դը գ'ըրինք, դը գ'ըրէք
Անց. ապառնի—դուզէի, դուզէիր, դուզէր, դուզէինք, դուզէիք
դը գ'ըրէի, դը գ'ըրէիր, դը գ'ըրէր, դը գ'ըրէինք և այլն:

Թխական եղանակ

Ապառնի—ուզիմ նէ, ուզես նէ, ուզմ նէ, ուզինք, ուզէք նէ
գ'ըրիմ նէ, գ'ըրես նէ, գ'ըրմ նէ, գ'ըրինք նէ, գ'ըրէք նէ
Անց. ապառնի— ուզէի նէ, ուզէիր նէ, ուզէր նէ
գ'ըրէի նէ, գ'ըրէիր նէ, գ'ըրէր նէ

Այսոնարհում—աղալ

Սահմանական եղանակ

Ներկա— գաղամ, գաղաս, գաղա, գաղանք, գաղաք, գաղան
Ներկայի շարունակական— գաղամ նէ, գաղաս նէ, գաղա նէ և այլն
Անց. առկատար—գաղայի, գաղայիր, գաղար, գաղայինք,

գաղայիք

Վաղակատար— աղցէր իմ, էս, մ || է. ինք, էք, էն
Անց. վաղակատար— աղցէր էի, էիր, էր, էինք, էիք, էին
Հարակատար— աղած իմ, էս, մ || է. ինք, էք, էն
Անց. հարակատար— աղած էի, էիր, էր, էինք, էիք, էին
Անց. կատարյալ— աղացի, աղացիր, աղաց
աղացինք, աղացիք, աղացին

Անցյալ կատարյալի շարունակական— աղացի նէ, աղացիր նէ...

Հրամայական եղանակ

աղա'—աղացէ՛ք

Բղական եղանակ

Ապառնի— աղամ, աղաս, աղա, աղանք, աղաք, աղան
Անց. ապառնի— աղայի, աղայիր, աղար, աղայինք, աղայիք
աղային

Հարկադրական եղանակ

Ապառնի— դադամ, դադաս, դադա, դադանք, դադաք, դադան
Անց. ապառնի—դադալի, դադալիր, դադար. դադալինք, դադալիք՝
դադալին:

Թխական եղանակ

Ապառնի— աղամ նէ, աղաս նէ, աղա նէ...

Անց. ապառնի—աղալի նէ, աղալիր նէ, աղար նէ

Ածանցաւոր բայերի խոնարհումը. հագնիլ «հագնիլ», մտնալ «մտնանալ»:

Սահմանական եղանակ

Ն ե ռ կ ա— գը հագնիմ, գը հագնիրք, գը մտնամ, գը մտնանք

» հագնիս, » հագնիրք, » մտնաս, » մտնաք

» հագնէ, » հագնին, » մտնա, » մտնան

Ներկայի շարունակական— գը հագնիմ նէ, գը մտնամ նէ և այլն:

Անց. անկ.—գը հագնէի, գը հագնէինք՝, գը մտնալի, գը մտնալինք՝

» հագնէիր, » հագնէիրք՝, » մտնալիր, » մտնալիրք՝

» հագնէր » հագնէին, » մտնար, » մտնալին /

Վաղակատար— հագէր, մտցէր իմ, էս, ան || է.

Անց. վաղակատար—հագէր, մտցէր էի, էիր, էր.

Հարակատար—հագած, մտցած իմ, էս, ան || է.

Անց. հարակատար—հագած, մտցած էի, էիր, էր.

Անց. կատարյալ— հագա, հագար, հագալ. հագանք, հագաք, հագան

մտացա, մտացար, մտացալ, մտացանք, մտացաք, մտացան

Անցյալ կատարյալի շարունակական—հագա նէ, մտցա նէ և այլն:

Հրամայական եղանակ

հագի՛ր—հագէ՛ք՝. մտցի՛ր—մտցէ՛ք՝

Ըղծական եղանակ

Ա պ առ ն ի—հագնիմ, հագնիրք, մտնամ, մտնանք

հագնիս, հագնիրք՝, մտնաս, մտնաք

հագնէ, հագնին, մտնա, մտնան

Ա ն ց. ա պ առ ն ի—հագնէի հագնէինք՝ մտնալի մտնալինք՝

հագնէիր հագնէիրք, մտնալիր մտնալիրք

հագնէր հագնէին մտնար մտնալին

Հարկադրական եղանակ

Ապառնի — զը հագնիմ, զը հագնիս, զը հագնի հ ալին
զը մառնամ, զը մառնաս, զը մառնա...

Անց. ապառնի — զը հագնէի, զը հագնէիր, զը հագնէր
զը մառնալի, զը մառնալիր, զը մառնար

Թխական եղանակ

Ապառնի — հագնիմ նէ, հագնիս նէ, հագնէ նէ
մառնամ նէ, մառնաս նէ, մառնա նէ

Անց. ապառնի — հագնէի նէ, հագնէիր նէ, հագնէր նէ
մառնալի նէ, մառնալիր նէ, մառնար նէ

Անկանոն բայեր

Էրթալ «երթալ» — գէթամ, գէթաս, գէթսն || գէրթամ, գէրթաս, գէրթսն
գէրթալի, գէթալիր, գէթար
գ'ացի, գ'ացիր, գ'աց || գ'ընաց
գ'ընա' — գացէ՛ք' || գ'ընացէ՛ք'
գ'ացէր, գ'ացած, գ'ըցող || էթօղ,
էթալու, էթալէն, էթալով

Գալ «գալ» — գուգամ, գուգաս, գուգս
գուգալի, գուգալիր, գուգար
էգա, էգար, էգալ
էգօ' — էգէ՛ք'
էգէր, էգած, էգօղ, գ'ալու, գ'ալէն, գ'ալով

Ուղէլ «ուտիլ» — գուղիմ, գուղես, գուղսն
գուղէի, գուղէիր, գուղէր
գէրա, գէրար, գէրավ
գէ՛ր — գէրէ՛ք'
գէրէր, գէրած, ուղօղ, ուղէլու, ուղէլէն, ուղէլով

Նմուշ՝ օրորոցի երգ

(Խարբերդի բարբառի Հյուսիսիկ պլուդի խոսվածքով)

Լուսունդան գամար — գամար
էս գուլամ քէզի համար,
Գ'առըս նէննի, նէննի, նէննի...
էգօ՛ գըլի քընացիր,

Իմ անուշ խաթերըս համար,
Զ'ապրս օրօր, օրօր, օրօր...
Գ'առնուզըս նա դէղանը,
Զ'ուր գօլէր փօս դէղանը.
Սիրդըս էղէր ազվընիգ,
Զի գէնար նա դէղանը
Այն ըսիմ նրին գուգ'ա,
Սիրդըս սէվ քարին գուգ'ա
Վախիմ թա դարիւպ մէռնիմ
Օ'չ քօր, օ'չ նիսնար գուգ'ա:
Օ'ր ըսիմ օրիգըդ շադնա,
Օրըդ ու արեվիգըդ շադնա,
Ռէգ, արեվէգ դաքնամ,
Քէգ աղգէգ լար մի գ'ըդնամ,
Օրօր ըսիմ քընանաս,
Հադար փառքի դիրանաս:
Բ'ալց էրօր քունքըդ չըգա,
Զախու առնէմ քընանաս:
Լուսունգան բազ բ'օլըրէց,
Սէվ ամբին մէջ օլըրէց,
Յարիս դուրբէթըն էրթալը,
Յօթը դարին բ'օլըրէց:

ՉՄՇԿԱՅԱԳԻ ԵՆԹԱԲԱՐՔԱՌ

Ձախավորները քանակով ու փոփոխությամբ Չմշկածագի ենթաբարբառը նույն է Պարբերդի բարբառի հետ, այն տարբերությամբ, որ ա ձախավորի քմախնացումն ախտեղ սպելի շեշտված է հ, որ է ձախավորը թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերում հավասարապես դառնում է ե, օրինակ՝ էս—ես, էփ—երբ, էդ—ետ, էրդու—երկու, էդավ—եղավ, էրած—երազ և այլն:

Դիտողութլուն— Ա ձախավորի քմախնացմամբ Չմշկածագի ենթաբարբառը դառնում է Ակնա բարբառի ուժեղ ազդեցության տակ:

Չմշկածագի ենթաբարբառը երկբարբառներ չունի, գրաբարյան երկբարբառները ախտեղ նույն փոփոխությանն են ենթարկվել, ինչ Պարբերդի բարբառում, այսպես.

ալ > ա. էրդան—երկայն, ախար—եղբայր.

ու > ո. օր, ամօթ, ձանօթ—ծանօթ.

ի > ի. ախար—աղբիւր, արին—արին.

ոլ > ո. կօն—դոն, պօն—բոն, թօլ—թոլլ, քօլ—քոլլ:

Ի տարբերութլուն Պարբերդի բարբառի, այս ենթաբարբառը շնչեղ ձախեղ բաղաձայններ չունի: Գրաբարի ձախեղների դիմաց լինում են խուլ, իսկ խուլների դիմաց՝ ձախեղ պայթականներ.

Բ > պ. պարիք—բարիք, պրոնէլ—բունել, պարս—բարձր, պան—բան, պէրէլ—բերել, պարզընալ—բարկանալ, պարըզնալ—բարականալ, բարակել.

Գ > կ. կօրձ—գործ, կիզնալ—գիտնալ, գիտենալ, կլօխ—գլխիս, կալ—գալ, հօկի—հոգի.

Դ > ա. աէմ—դէմ, տուք—դուք, տրծօխկ—դժոխք.

Աղդպես և ձ ու ջ բաղաձայնները. ժի—ձի, ճուր—ջուր, ճօրի—ջորի, առաճ—առաջ, մըռճուն—մըջին:

Ծ ա ն ո թ ու թ չ ու ն 1.— Թուրքական փոխառություններում ու հայերեն բնաձայն բառերում ձայնեղ պալթականները մնում են անփոփոխ. օրինակ՝ բոջ «հասակ» — թրք. boy, գոմի «սանձ» — թրք. qemi, բաղ «բեղ» — թրք. bey, բալքի «գույն» — թրք. belke, բուալ, դրոգրալ:

Ծ ա ն ո թ ու թ չ ու ն 2.— Այն դեպքում, երբ դ-ն դառնում է խ, ապա ալք խ-ին կից ձայնեղ պալթականը խլանում է, իսկ երբ դ-ն մնում է անփոփոխ, ապա ձայնեղ պալթականը պահում է իր սրակը:

Ծ ա ն ո թ ու թ չ ու ն 3.— Մեկ անդալիսներից հետո ձայնեղ պալթականները մնում են անփոփոխ կամ դառնում են խուլ, օրինակ՝ հինգ, խընդալ, համպէրէլ:

Յուլ պալթականներին համապատասխանում են ձայնեղները.

Պ > լ. բադմէլ — պատմել, բադիլ — պատիւ, բէս — պէս, բարդք — պարաք, բջէղ, բըջղէլ «կեղև, կեղևել» — պճեղն, պճղել, բէլէլ — պահել, արբուսդ — ապրուստ:

Կ > գ. դարէլ — կապել, սադգէլ — սատիկ, իսդադ, իսդըգէլ — խտակ, խտակել:

Տ > դ. դէր — աէր, դանէլ — տանել, գէդ — աեղ, մըզնէլ — մտանել, աղէն — առեն — առեան «ժամանակ», դալ — տալ, դուն — տուն, դասը — տան: սոդ — սուտ:

Ծ > ձ. ձագ — ծակ, ձէձէլ — ծեծել, ձախէլ — ծախել, արձաթ — արծաթ:

Ճ > ջ. ջամփա — ճամփա, ջաշնալ — ճանաչնալ — ճանաչել, ջըխկէլ — ճեղքել:

Մյուս բաղաձայնները սովորաբար մնում են անփոփոխ:

Ի տարբերություն Պարսկերի բարբառի, այս անթարարառում գ՛, ք՛, ֆ հնչյուններ չկան (չբանք պահվում են թուրքական փոխառություններում, օրինակ՝ ք՛ի — որ, քէֆ և ալլն):

Գոյականների հոգնակի թիվը կազմվում է եր, ներ մասնիկներով. եր սառնում են միավանկ, իսկ ներ՝ բազմավանկ բառեր, օրինակ, փաղեր «փայտեր», արքաներ «չրացիներ», պարիզամներ «բարեկամներ», բնգերներ «ընկերներ»:

Չախալորով վերջացող բառերն ստանում են ք. դընեցիք (նաև դընէցիներ), մօրիք «անտաններ», ճօրիք «ջորիներ»:

Այս անթարարառում պահպանվում են մի քանի մասնիկներ, որոնք գործ են ածվում թե՛ հոգնակի կազմելու և թե՛ հավաքական իմաստ արտահայտելու համար.

Վնի—գընի «տներ», շընի «շներ».

Վի, ֆէր—ձընգի կամ ձընգիէր «ծնկեր», անգընգի «սականեր»

Դիք—սիւրըրդիք «կորալըներ», տմընգիք «ամաններ»:

Դանք, դաք—քուրվըդաք «քուլըներ», զընդաք «կանալք», ընդէր-
դաք «ընկերներ».

Վանք, վան—դէզվանք «տեղեր», դիրվան «տերեր».

Ադան—ճօրիստան—«շորիներ», սևո, ճօրիսդընան:

Այո կնխարարառում հոլովներն ու հոլովածը նույն են Խար-
բերդի բարբառի հոլովների ու հոլովման հետ:

Գերաբնուն

Անձնական գերանունների հոլովումը

Աղղ.—	էս	տան	ինք	մէնք	տաք	իրէնք, իրանք
Սևո.—	իմ	քու	իրէն	մէր	ծէր	իրէնց
Տը.—	ինծ, ինծի, քէզ,	իրէն,	մէզ,	ծէզ,		իրէնց
Բաց.—	ինծմէ,	քէզմէ,	իրմէ,	մէզմէ,	ծէզմէ,	իրէնցմէ
Գործ.—	ինծմով,	քէզմով,	իրմով,	մէզմով,	ծէզմով,	իրէնցմով

Ցուցական գերանունների հոլովումը

Աղղ.—	ան	ան	ան	անոնք	անոնք	անոնք
Սևո. տը.—	անօր	անօր	անօր	անօնց	անօնց	անօնց
Բաց.—	անօրմէ	անօրմէ	անօրմէ	անօրմէ	անօրմէ	անօրմէ
Գործ.—	անօրմով,	անօրմով	անօրմով	անօրմով	անօրմով	անօրմով

Բայ

Օժանդակ բայի ձևերը.

Ներկա—էմ || իմ, էս, ա, էնք, էք, էն.

Անց. անկատար—էի, էիր, էր. էանք, էիք, էին:

Բայի կդանակներն ու ժամանակները նույն են, ինչ Խարբերդի
բարբառում, միայն աշտուղ՝ Չմշկածագի կնխարարառում, ներ-
կայի շարունակականը և թեական կդանակի ձևերը կազմված են
նա մասնիկով:

Պայմանական կդանակի համար օգտագործվում են սահմանա-
կան ներկայի ձևերը, օրինակ՝ «Հմլըսթ ծանքս լանն գէլլն, գուդամ»,
«Ան աղէնը քէզ թող գուդան գէրթառ...»:

Չմշկածագ քաղաքից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած մի
քանի գլուղերում, օրինակ՝ Հաղարի գլուղի խոտածառում, սահմա-
նական ներկա ու անկատար ժամանակները կազմված են զա մաս-
նիկով. օրինակ՝

«Մէնք ամռանը լոխզընայինք գա դըդանէրուն հէդ»:

Բայի խոնարհման ձևերի մասնակի տարբերությունները երկ-
վում են ստորև դրվող տախտակից.

Սահմանական եղանակ

ն հ ր կ ա		ա ն ց. ա ն կ ա տ ա ր	
զը քաշէմ,	զը քաշէնք	զը քաշէի	զը քաշէանք
զը քաշէս,	» քաշէք	» քաշէիր	» քաշէիք
» քաշմ,	» քաշէն	» քաշէր	» քաշէին

Անց. կատարյալ—քաշէցա, քաշէցար, քաշէցաւ, քաշէցանք,
քաշէցաք, քաշէցանք.

Հարկագրական եղանակ

Ապառնի—դի քաշէմ, դի քաշէս, դի քաշմ և այլն:

ՆՄՈՒՇՆԵՐ ՉՄՇԿԱԶԱԳԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌՈՎ.

ՃՕՐԻՆ ԶԱԳԸ ՄԴԱՎ.

Վախպին դուրս—չըլիր էրդու տըրացին դըլին: Ան տըրաց-
նին մէզը մէզալինմէ քանի մի խորուշ փարա բարդք գէնս: Ան
տոնալիքին դէրը էիէլի (տնագին) վախա գը համպէրմ. գը հայի
օր իրէն բարդքընդէրը հէչ անդըղացի չըլիր նս. քանի մը հէզ
փարան գուզս: Ան ըլ «անօր, մաղը» ըսէլով գը ծըկծըկն ու չի-
զար: Օր մըլ փարալին դէրը գինս ան բարդքընդիրօճ տօշուն ըտա-
սէր գուկն ու գըսս.

—Բէ տխպար, ան քանի՞ ամիս էդավ էս քիզի փարա իմ
դըվէր, ինչէ՞ չէս ի դար. ինծ ըլ բէդք ան:

—Շադ աղէզ, ըմա օր չունիմ նս ուսկա՞ դի դամ,— գըսն
բարդքընդէրը,— քիչ մըլ համպէրմ, ասված օղորմած ան, հանքն
ծանքս լանն գէլն, գուդամ, չի փախանք յա, չանըմ...

— Զօ՛, ան ինչ խօսք ան, չի՞ս ամշնար,— գը բօռա տոնա-
լիքովը,— ասված թէ օր է՞փ գօղօրմի, ասված սողգած իշուն ըլ
գօղօրմի, ըմա նալէրը գը քաշէն ու քուլլազը գը նէդէն: Էս քի-
զի կիշուլուն չէրիցա, բարդք էս, դո՛ւր, վանսնլմ՛մ...

Հասանգով էրգուքն ըլ գը բաշլալէն բօռըրուալը: Ան աղէն
անդըղաց բաշլա մարթ մի գասնի լլ գասնն, անօն խաղվան գէսչ
նալով գըսն քի. «Ամօթ ան նանլնթ գըվէք չար սողանին, ի՞ն-
չը գըռլըդիք, վաղը գինս իրարու էրէս դի նալիք»:

—Բէ ջանում, զավալու սաղանան անպէղ ի՞նչ մէխկ ունի,—
զըսն առնալիքդէրը,— էս ան մարթուն քանի ամիս անոս փարա
իմ գրկէր, հըմա չի պար, էս հախտան ի՞մ (թրք. իրավ) փարաս
ուզէլու:

—Հախ ունիս, բմա արասալին օտթան չէն բօնբրտդար, ամօթ
ա, — զըսն մինազըն (հեծյալը) ու գէրթա:

Ան էրգուքը քիչ մըլ գըխօսան ու ամէն մարթ իրէն դունը
գէրթա: Առնալիք ունէցօղին գանը ջամփան նէղ ու մութ գուվախէ
մի գաննի: Մարթը դուն էրթալու աղէն, ան գուվախին քջօշն
հասնիլուն բէս սաղանան մարթու խլլնփնթօլ տէմը գէլլա ու
փարալին դիրուն զըսն քի «Տուն անօր ինծի պարիք էրիր, իմ թա-
րաֆէս խօսապիր քիչ մի անոս, էս ըլ քու պարիքիս դագէն
դէլլամ:

Ան մարթը շաշմիշ գըլլի. «էս ան մարթուն հէչ չիմ դէսէր,
չիմ ըլ ջաշնար, ան ինդ՝օր պարիք էրա՞ գըլլիմ» դէլի գը մըղ-
մըղա նոն, սաղանան անօր մղքինը գը հասգընա ու զըսն.

—Տուն ինծի չէս դէսէր, էս սաղանան իմ...

Ան օր գը լըսն, ան մարթը գը սօղա ու գուղն փախիլ: Սա-
ղանան անօր փնօքը գըպըռնն ու աղէգութունօլ զըսն.

—Հէչ մի վախիր, էս քիզի աղէգութուն դէնիմ, տուն ինծի
«չար» ըսօլ մարթուն ըսիր քի խէղջ սաղանան ի՞նչ մէխկ ունի,
անօր համար ըլ էս քիզի իլլն պարիք մի դէնիմ. ի՞նչ էնիմ, ըսն՝:

Մարթուն բասարաթը գը գարլի, ծան չի հանիր, բնլ—բնլ
սաղանին էրիսը գը նալի || նալն:

Դէ՛ս, հըմա ի՞շ զըսիմ քիզի,— զըսն սաղանան, — էս շիէդ
ճօրի մի գըլլիմ, անօնթ գումօղ սոնսլն անթօղ, տուն իմ գնմէս
գը պըռնէս, գը դանիս արասանգը ձախիս դասը—դասըհինգ օս-
պիի ու փարատ գաննէս կօրծիդ գէրթաս: Ան սահաթին հըմըն
պարս, շիէդ ճօրի մի գըլլի, անօնթ գումօղ անթօղ, սոնսլն ճօրի
մի, օր չուդիս, չի խմէս, բօյնիվէր նալիս...

Ան մարթը գը դէսնա օր իրավուցղան էղալ, գնմէն գը քա-
շն շիդագ չարսուն գը դանն մնգութը գը հանն գանդին մարթու
մի սուղ կընօլ գը ձախն, փարան գանն, խնտալօլ դուն գուկա:
Անի թօղ էրթա իրէն պանին...

Հըմա կանք ճօրուն դիրուն. անի անխըղըր քէֆ գըլլի, գուր-
խընա օր հանանդ չի դէսնըվա՞ ճօրի մի առէր ան դէլի, իրէն տը-
րասնէրը, պարիգամնէրը, ընգէրնէրը, օր գըլըսէն հանանդ ճօրի
մի առնէր, հըմըն փիթուն գը թօփօղին գուկան աճկալուսանքի ու

ճորին սրնամիշ էնէլու համար խօսք մէկ գէնէն քի միդալ օրը էրթան տէմի լոսը քէֆ էնէլու: Փիթուն ըլ ադա, բոնգ մարթիգ էն, արբուդի խալդա—խոսնովնթ չունին, կօրձ չունին, ի՞նչօր ադէն դանցընէն...

Մէգալ աոգուն ամէն մարթ իրէն ճորին յա ծին գը հազըրն, գը ժօղլըվին, ադէլիք—խըմէլիք գաոնան, գը հէզնուն ճօրիսղընուն ու, յալլա...

Ջամփան ջիրիտ խաղալով, քէֆ էնիլով գէրթան, նո սադանա ճօրին փիթունէն նոռա գասնի, գէրն ըլ պարսէն գը հալի մէզըլ-դօնց վրա, խաբարմիշ գըլլի ինք իրէն, մէզըլդօնք ըլ ննօր չար աճկով գը նալին:

Հնդանգով քիշ մի գէրթան ջամփան պուլալ ախպիրի մի գը հաոնին, գըսէն քիշ շօս քիշ մի հակճինք, հաց ուղինք, հալվըն-նէրն ըլ թօղ ճուր խըմէն, արձին, խօնջէրնին էշնա ու էդքէն էր-թանք: Ամէն մարթ իրէն ծին յա ճօրին գը դանն գը ճըրն: Սա-դանա—ճօրու գէրն ըլ գնմը պէրնէն գը հանն, կըլխէն չն', մընադ պէրնէն, ու գը քաշն ախպըրին նոռն օր ճուր խըմցընն: Սադա-նա—ճօրին էդ—էդ գէրթա, չի խըմիր, գէրը քանի մի հէդ նոռա գը քաշն, նն գինն էդ—էդ գէրթա: 'Իրուն հիրսը գէլա. «Յըմն», շան ձախաձ» ըսիլով ճօրուն գօղուն գը մըշգն: Ան ճօրին կլօխը գը ձրոն, անգըջվին գը դընդն, գը պարզընա ու գը մըզնա ախ-պիրին լոնլոնին ձագը: 'Երը նո օր գէսնա, շաշմիշ գըլլի ու գը բօռա. «Ճօրիս ձագը մըդա՞վ, հասէ՞ք. ճօրիս ձագը մըդա՞վ...» ու լոնլոնին ձագէն գը նալի || նալն, օր անգըջնէրը գը խաղցընն:

Անօր ծննին վրա քօլի մարթիքը գուկան ու գը բաշլալէն նոօր վրա խընդալը քի հէշ խօջաման ճօրին ձագը գը մըզնն՝ ու նսօր գըսին քի, —խէնթացէ՞ր էս, ի՞նչ ն, հէշ ճօրին ձագը գը մըզնն՝...

—Ձօ', չէք հալդար նն, հալիցէք դէսէք, անգըջվին գը խաղ-ցընն,— գըսն ճօրուն գէրը ու ինքը գը ձրոի գը նալի || նալն:

Մէզըլդօնք ըլ գը նալին պան չէն դէսնար ու գինն գը բաշ-լալէն խնդալը քի նո մարթը խէնթցէր ն, նսի թիժարխաւանա դի դարվի:

Մարթը գը հիրսօդի ննօնց վըրա, քի ի՞նչ է դի խէնթնա, իշգն ճօրին ձագն ն մըդէր, համ ըլ անգըջնէրը գը խաղցընն:

—Ձօ', մարթ ասոօ, խէլքըտ կըլօխըտ ժօղվն, նդանգ սա-փուռ-սուփուռ տուրս մի դար էլի, էրգրի մէճ մասխարա գըլլիս, մէկ ըլ հէղըտ գէնիս,— գըսէն քօլիննէրը,— նլմմը քիզի խէլօք մարթ գը շաշնն, հըմա մադ մի մէրդը գըլլիս խօ քաղքին մէշ:

— Է՛հ, տու՛ք ըլ անրա՛ծ սըրդիս մանէլս մի՛ ցանէք,— զը բօռա տաղանա-ճօրին դէրը, — քօ՛ր չէք լա հալիցէք, Իշդան լո՛ւլանլին ձա-գին մէ՛ճ անգըջլին զը խաղցնան:

Ընգէրդանքը զը հային օր ան մարթը գինան իրէն կիղցածը գըսան: Ալ լրման խէնթցէր ան ըսիւով, իրէնց ըլ գարար մի չի դա դէլի, զը գարէն, զը պէրէն քաղաք ու շիգադ թիմարխանան զը դանին թնսլիմ գէնէն:

Ան դէլ անօր հարցուիօրց գէնէն, քի ինդօ՞ր էղավ, օր ճօ-րին ախարին ձագը մըղավ: Ան ըլ էղածին բէս զը բաղման: Անօնք ըլ զը խընդան, գըսէն քի իրավաց խէնթցիր ան, անօր զը պըռնէն նանմ ու մութ գէլ մի զը գօխէն, քիշ մըլ զը ձէձէն օր բնլքի խէլքը կըլօխը կան:

Դընէցիք խաբար գառնան, զը վաղէն գէրթան քօլը, զը հարց-նէն ինչ ըլիլը, անօնց ըլ անանգ զը բաղման: Դընէցինէրն ըլ շաշմիշ գըլին քի, հանրանթ խէլքին գավալ ան էգէր, չան նան ինդօ՛ր ճօրին ախարին ձագը զը մըղնան:

Քանի մի օր անգ նանմ քօթիսը մընալէն էղքը, օր մի գէրթան զը հարցնէն, քի ճօրին լինչ էղավ:

— Ձագը մըղավ, ինչ էղավ, Էրգընցավ, պա՛րըզցավ մըղավ լո՛ւլանլին ձագը,— գըսան խէնթ ըսվածը:

Դինան վըրան զը խընդան, քանի մի սիլան ըլ զը զաննէն ու գըսէն քի հանն չան խէլօքցէր, թօղ մընա ճաթխալնէրուն քօլ, բնլքի խէլօքանա:

Քանի մի օր ըլ գաննի, անօր սըրդացավ ընգէր մի գըլի, անի գուկա դիսնալու, զը հարցընան քի ինդօր է էղէր. խէնթ ըս-վածն ըլ մէգըլդօնց ինդօր բաղմէր էր նան, անանգուգ զը բաղ-ման:

— Շագ աղէդ,— գըսան ընգէրը,— ըսինք քի ճօրիդ ձագը մըղէր ան...

— Ինդօր քի ըսինք քի մըղէր ան,— հիրսօղէլօլ զը բօռա խէնթ ըսվածը, — մըղանլ, գըսիմ քիզի, չէ՛ս հասգընար, էրգընցավ, պա-րըզցավ ու մըղավ, խօշ տուն թս կիղէս օր էս խէլքս կըլխիս մարթ իմ, հըլան մըղնալէն էղքըն ըլ նալիցան ան անգըջլին զը խաղցընէր.

— Հան, ախպարս, էս ըլ քիզի հէգ ըսիմ քի մըղավ,— վըրա զը պէրան ընգէրը,— խալխը զը հավդան, լախօթ օր տուն թէ էղքը անանգ ըսիս, քիզի անգըղաց զը հանլին, մէխըլ չան քիզի: Էգօ, տուն քարը փէշէտ թափա ու, օր հարցընօլ ըլի նան, ըսան քի,

հէջ ճօրին ձագը գը մըդնան, ան աղէնը քէզ թօղ գուդան գէրթաս օղլուշաղիտ քօվ, չօլուխ—չօճուխնուտ մէխկցիր:

— Հալլան, հալլան, է մըդավ նան, ինդծր ըսիմ քի սուդ ան.— ճուդաք գուդա ճօրուն դէրը,— հըբա գոնգէլ իմ. ճօրիս ինչ էղավ, էս ըլ գը վարմանամ, փէշ մի փարա էի դըվէր:

— Հասգըցանք, ջանըմ—գլօղոնմ, Ֆախաստ տուն էգօ դան հանրանին խաբար հասգըցուր,— գը համօզան ընգէրը,— տուն աբօվ-նամուսօվ, անուսօվ, քանիլ մարթ էս, ամօթ չան քու բաղիվիտ, որ անդէղ մընաս, քէզ մասխարա էնէն, անունրտ ըլ փարի մի ըլլի, ջանանանմին, սան քի ընգավ սաղգէցավ, հօկիէտ էվէլ չան չան. սուդ ան, ըսան ու հօկիդ ազադան ան տըթօխքէն, վանսանմամ...

Ճօրուն դէրը գը նալի օր ընգէրօճ ըսածը իրավ ան, գը համօղլի ու խօսք գուդան օր ալ հանդանգ պան չըսան: Ընգէրը գէրթան...

Մէգալ առդուն գուդան թիմարխանանինէրը գը հարցնին քի ինչ ան էղէր ճօրին, ձագը մըդէ՞ր ան, անգըջվին գը խաղցընան:

— Ի՞նչ ճօրի, ինչ պան, ճօրին ինդծր ձագըն ա մըդէր,— գը հէրսօղի խէնթ ըսվածը,— խէնթ էք, ինչ էք, հէջ խօջա ճօրին ձագը գը մըդնան:

Հանսանգ օր գըսան, անօնք ըլ գըսէն քի ան մարթը խէլօքցէր ան, թօղ գուդան օր էրթա իրէն դունը:

Յի մարթը թիմարխանայէն դուրս էլածին բէս շիդագ ան ախպիրը գէրթա ու լուլանին գը նալի քի դէսնա ճօրին հօն ան. գը դէսնան օր գինան անգըջվին գը խաղցընան... գընալի, գընալի, կըլօխը թօթվէլէն դուն գուդան:

Պատմեց Համբարձում Գառպարյանը
(չմշկաժագցի, ծն. 1898 թ.) Նոր Կյանք
գլուդի միջնակարգ դպրոցի հայոց լեզ-
վի և գրականության ուսուցիչ):

ՀԱՋԱՐԻ ԳՅՈՒՂԻ ԿՈՍՎԱՍԹՈՎ

Մէր էրգիրը ծօրու մէջ է. հօն գամուրչ մի գա՛ Գօթէրու գամուրչը: Մինք ամուսնը լօխգընայինք գա դըղանէրուն հէդ. էգնէրը բաղգէցնէինք, լօխգըցընէինք գա:

— Ջօ, էգնէրը պէրըք լըճինք,— գանչէինք գա, բըղղապնէրուն:

ՉԱՐՍԱՆՃԱԳԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌ

Հնչյունների քանակով ենթաբարբառս նույն է խարբերդի բարբառի հետ: Խոսվածքների Բերրիի խմբում *ն* չկա: Ձայնավորները սովորաբար հնչյունափոխության չեն ենթարկվում: Մայր բարբառի համեմատությամբ նկատելի են հետևյալ մասնավոր տարբերությունները:

ա) Բառասկզբի *ե* ձայնավորը հավասարապես լինում է *և* յե և *ե*. օրինակ՝ լերթիգ կամ էրթիգ-երգ(իք), լերերալ կամ էրերալ—երերալ, լերինչ կամ էրինչ—երինչ, լերգանք կամ էրգանք—երկան, լեփ կամ էփ—եփ, լեփիլ կամ էփիլ—եփել, լեգ կամ էգօ—եկ:

բ) Բառի մեջ երկու հաջորդական *ե*-երից առաջինը, երբեմն նաև հաջորդը, դառնում է *ի*. այդպես է Իսմայել գյուղի և Բերրի քաղաքի խոսվածքներում. օրինակ՝ իրեք—երեք, իրիգուն—երեկո:

գ) Բառասկզբի *ո* ձայնավորը արտասանվում է թե *օ*, և թե *վօ*, օրինակ՝ վօվ—ով, օխճ կամ վօխճ—ողջ, վօջ կամ օջ «մի չափ՝ արտավար»—ոճ, օռնալ կամ վօռնալ—ոռնալ և այլն:

Գրաբարյան երկբարբառների փոփոխությամբ ենթաբարբառս համընթաց է մայր բարբառին, միայն խոսվածքների Բերրիի խմբում (բացի Հոշե գյուղից) այ երկբարբառը լինում է ա կամ *ե*, օրինակ՝ ձար—ծայր, փադ կամ փէդ—փայտ, մար—մայր, կալ կամ կէլ—գալլ, էքի—ալգի, էրիլ—այրել:

Այս ենթաբարբառում էլ պակասում են շնչեղ ձայնեղ պայթական բաղաձայնները. գրաբարի ձայնեղների դիմաց լինում են խուլ, իսկ խուլերի դիմաց՝ ձայնեղ պայթականներ:

Միայն մեկ դեպքում, մասնավոր կանոնով, *պ*, *տ*, *ծ*, *ն*, *կ* խուլերը մնում են անփոփոխ. այդ լինում է խուլ բաղաձայնների մոտ, օրինակ՝ բարիսպ—պարիսպ, բաղքաւտ—պատրաստ և այլն:

Մյուս բաղաձայնների հնչյունափոխության մասնավոր երեւոյթներով ենթաբարբառս խարբերդի բարբառից չի տարբերվում:

Բ-ին հաջորդող ձայնեղ պալթականները, չնչին բացառու-
թյամբ, դառնում են շնչեղ խուլ. ալբալես նաև խ դարձած դ-ի մոտ:

Գ՛, ք՛ բաղաձայնները հանդիպում են ոչ թե ե, ի ձայնա-
վորներից հետո, ինչպես մայր բարբառում է, այլ դրանցից առաջ
սակավաթիվ բառերում, օրինակ՝ պարգե՛կնթանք—բարեկենդան, եր-
գե՛կնք—երկին(ք), երգե՛ր—երկիր:

Գոյականների հոգնակին կազմվում է հետևյալ կերպ, միա-
վանկ բառերի համար ավելացվում է եր, բազմավանկ բառերի հա-
մար՝ ներ կամ նի, ձայնավորով վերջացող թե՛ միավանկ և թե՛
բազմավանկ բառերի համար՝ ք մասնիկները:

Ուշագրավ է Իսմայել գյուղի խոսվածքը, որը երկվանկ բա-
ռերի հոգնակին հավասարապես կազմում է ներ և նի մասնիկնե-
րով, ալբալես.

Աղվէս—աղվէսներ

Կոմէշ գգոմեշ—նէր

Թուրքմէն—նէր

Ախչիգ «աղջիկ»—ախչընէր

Ձաղիգ «ծաղիկ»—ձաղգընէր

Սայման «սահման»—նէր

Օչխար «ոչխար»—նէր

Մաղաղ «մատաղ»—նէր

Փըսըգ «կատու»—նէր

ախպիր «աղբյուր»—ախպըրնի

արդա «ատամ»—արդընի

պէրան «բերան»—պէրաննի

բարքէվ «պարգե»—բարքէվնի

գաքավ «կազավ»—գաքվընի

կըլօխ «գլուխ»—կըլօխնի

ձաղիգ «ծաղիկ»—ձաղգընի

ջագադ «ճակատ»—ջագադնի

փափուշ—փափուշնի

Իսմայել գյուղի խոսվածքում ի-ով վերջացող բառերի հոգ-
նակին կազմում է նաև սղան մասնիկով.

պանլի «բանալի»—պանլիսղան, պալլիսղան

կինի «գինի»—կինիստան

քէռի—քէռէսղան

օսգի «ոսկի»—օսգէսղան:

Այս ենթաբարբառում մարմնի զույգ անդամ նշանակող բա-
ռերի հոգնակին կազմվում է վի || վնի մասնիկով.

ագանջ «ականջ»—ագընջվի, անգըջվընի, ձունգ «ծունկ»—ձընգվընի,

ունք—ընքվընի, էրէս «ալտ»—էրէսվընի, աղջիր «եղջուր»—

աղջիրվընի, աչ—աչվի, ջուռ «աղդր»—ջըռվնի: Ալբալես և՛ ըղունգ

«եղունգ»—ըղընգվընի, դուն «տուն»—դըվնի, տուռ «դուռ»—տըռ-

վընի, քօր «քուլր»—քօրվընի:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն.— Խարբերդի բարբառի հավաքական մասնիկ-
ների լրիվ ցանկը մենք չունենք. ստորև, որպես համեմա-

տելի նլութ, դնում ենք Չարսանճագի ենթաբարբառի հավա-
քական մասնիկները՝ համապատասխան օրինակներով:

Ան—ծի «ծի»—ծիան, էշ—իշան, իշվան

Անք—լադող «լադօտ»—լադօղանք

Դան—լառ «լեռ»—լառդան

Դանք—աղբար «եղբայր»—աղբըրդանք, աղբէրդանք, ընգէր—ըն-
գէրդանք, քօր «քույր»—քօրվըդանք, քուրվըդաք

Դիք—ծակ «ձագ»—ծագդիք

Վան, վանք, վընէր, վընփ—դէղ «տեղ»—դէղվանք, դուն «տուն»—
դընէր, էշ—իշվանէր, դէր «տեր»—գիրան, անուն—անվընէր,
մէչ—միչվան, քօվ—քօվվան

Էրնի—մէնձ «մեծ»—մէնձէրնի, քիչ—քիչէրնի:

Գոյականների հոլովներն ու հոլովումները էական տարբերու-
թյուն չունեն մայր բարբառից, միայն Իսմայել գլուղի խոսվածքում
պատահում է բացառականը ուն վերջավորությամբ (գըսդըձուն
«կսկծից», դըգուն «տակից, քընուն—քնից, դըուն «կողմից», միջուն
«միջից», վախուն): Օք վերջավորությամբ գործիական հանդիպում
է Բերրիի և Իսմայելի խոսվածքներում, օրինակ՝ «ծէոք խըմեց»

Տեղանունները հոլովվում են ու կամ ա հոլովմամբ, ինչպես,
օրինակ՝ Տերսիմ—Տերսիմա կամ Տերսիմու, Ծօրպերան—Ծօրպեր
նա կամ Ծօրպերնու:

Դերանունների հոլովման մեջ նկատվող տարբերությունները
կարելի է տեսնել հետևյալ տախտակից.

Իսմայելի խոսվածք Ճանիկի խոս. Բերրիի խոս.

Ուղղ.—	յէս	յէս	էս
Սեռ.—	իմ(ին), իմնը	իմ	իմ
Տր.—	ինձ(ի)	ինձ	ինձի
Հայց.—	իզիս, ինձիս	ինձի(ս)	իզիս
	զիս, զընձիս		ինձիս
Բաց.—	իմմէն	իմընէ	
	իմմինէ	իմմընէ	իմմինէ
	իմմէնէ		

Գործ.— ինձ(ի)մօվ ինձմօվ ինձմօվ

Իսմայելի խոսվածք Ճանիկի խոս. Բերրիի խոս.

Ուղղ.—	տու	տու(ն)	տու
Սեռ.—	քու(ն), քուվը	քու, քուվ	քօ
Տր.—	քէզ(ի), քիզի	քէզ(ի)	քէզի
Հայց.—	»		

Բաց.—	քինէ(ն)	քում(մ)ընէ	քումինէ
	քումինէ		
Գործ.—	քէզմով	քէզմով	քէզմով
	քիզիմով		

Ժամալիկի խոսվածք Ճանիկի խոսվածք

Ուղղ.—	մէ(ն)ք	մէնք
Սեռ.—	մէր	մէր
Տր.—	մէզ(ի), միզի	մէզ(ի)
Հայց.—	»	»
Բաց.—	մէրմինէ	մէրմընէ
Գործ.—	մէզմով	մէզմով

Ուղղ.—	տուք	տուք
Սեռ.—	ծէր	ծէր
Տր.—	ծիզի	ծէզ(ի)
Հայց.—	»	»
Բաց.—	ծինէ	ծէրմընէ
Գործ.—	ծիզմով	ծէզմով

Ժամալիկի խոսվածք Ճանիկի խոս. Բերրիի խոս.

Ուղղ.—	ինք(ն)	ինք	ինք
Սեռ.—	իրա(ն), իր(էն), ուր	իր(ա)	իրա
Տր.—	իրան(ը)	»	» իրէն
Հայց.—	իզինք(ը)	»	»
Բաց.—	իրմէ, իրամինէ	իրմընէ	իրմինէ
Գործ.—	իրմով	իրմով	իրմով

Ուղղ.—	իրանք	իրէնք
Սեռ.—	իրանց, իրէնց	իրէնց
Տր.—	»	»
Հայց.—	»	»
Բաց.—	իրանցմէ	իրէնցմընէ
	իրանցմինէ	
Գործ.—	իրանցմով	իրէնցմով

Ծանոթութիւն— Իսմայել գլուղի խոսվածքում սովորական է գործիականը կազմել սեռականից «հէդ» ետադրութեամբ, օր. իրէն հէդ, իմ հէդ:

ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

	Ճ ա ն ի կ	Բ ե ռ Ր ի	ա ի լ խ ո ս վ ա ծ ք ն ե Ր
Ուղղ.— հայց.—	ան(ի)	ըս, ասիգա	ան, ասի, էսի, իսի, ըսի
Սեռ.— տր.—	անոր	ըսոր	էսոր, ըսոր, ըսգա, սդու
Բաց.—	անորմընէ	ըսգէ	էսորմէ, ըսորմէ
	ասգէ		
Գործ.—	անորմով	ըսով	ըսով, էսորմով
Ուղղ.— հայց.—	ան(ի)	ըտ, ատիգա	ան, էդ(ի) ըդ(ի), ըդիգա
Սեռ.— տր.—	անոր	ըտոր	էդոր, ըդու, ըդոր
Բաց.—	անորմընէ	ըտկէ	էդորմէ, ըդորմէ
	ատգէ		
Գործ.—	անորմով	ըտով	ըդով

	Ճ ա ն ի կ	Բ ե ռ Ր ի	ա ի լ խ ո ս վ ա ծ ք ն ե Ր
Ուղղ.— հայց.—	ան(ի)	ըն, անիգա	ան, էն(ի), ինի, ըն(ի)
Սեռ.— տր.—	անոր	ընոր	անու(ր), ընոր, էնոր, ինդոր
Բաց.—	անորմընէ	ընգէ	ընդորմէ, էնորմէ
Գործ.—	անորմով	ընով	ընով, էնորմով

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.— հայց.—	անոնք	ասոնք, ըսոնք	էսոնք, ըսոնք, էսօք, ըսօք
Սեռ.— տր.—	անոնց	ասոնց	էսոց, ըսոց
Բաց.—	անոնցմընէ	ասոնցմէ	էսոցմէ, ըսոցմէ
Գործ.—	անոնցմով	ասոնցմով	էսոցմով, ըսոցմով

Ուղղ.— հայց.—	անոնք	ըդոնք, ատոնք	ըդօք, ըդոնք, էդօնք
Սեռ.— տր.—	անոնց	ատոնց	ըդօց, էդօց
Բաց.—	անոնցմընէ	ատոնցմէ	ըդօցմէ, էդօցմէ
Գործ.—	անոնցմով	ատոնցմով	ըդօցմով, էդօցմով

Ուղղ.— հայց.—	անոնք	ընոնք, անոնք, անօք, էնօ(ն)ք
Սեռ.— տր.—	անոնց	ընոնց, անոնց էնօ(ն)ց, ընդոնց
Բաց.—	անոնցմընէ	ընոնցմէ էնօ(ն)ցմէ, ընդօ(ն)ցմէ
Գործ.—	անոնցմով	ընոնցմով էնօ(ն)ցմով, ընդօ(ն)ցմով

Բերրիի խոսակածքում սովորական գործածութիւնն ունեն նաև սը, դը, նը, դերանուաները, որոնք հոլովվում են ախպես.

Ուղղ.— հայց.—	սը	ղը	նը
Սեռ.— տր.—	սըվօր	ղըվօր	նըվօր
Բաց.—	ըսկէ	ըտկէ	ընգէ
Գործ.—	ըսօվ	ըտօվ	ընօվ

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.— հայց.—	սըվօնք	ղըվօնք	նըվօնք
Սեռ.— տր.—	սըվօնց	ղըվօնց	նըվօնց
Բաց.—	սըվօնցմէ	ղըվօնցմէ	նըվօնցմէ
Գործ.—	սըվօնցմօվ	ղըվօնցմօվ	նըվօնցմօվ

Ենթադրարբառում գործածական են նաև հետևյալ դերանունները.

Անքան, անքան, ըստի(ն), ընդի(ն), ըսդէդ, էնդի (բացառական հոլով՝ ընդուն, անդա, ասդա, ընդա):

— Անդանդ, անանդ, ասանդ, ըսանդ, ըդանդ, ընանդ, էնանդ.

— Ընդօր, ընդուր, էնդուր, ինդուր

— Ի՞նչ, ինչո՞ւ, ինչո՞ւմի Քանիսով», լէ՛փ, հէ՛ր վէ՛վ «յուրանքանչյուր ոք», վէ՛ր, քանի՛ք, քէսզի՛մ «ոմն», ո՞ւր, վճօր, վէ՛ր «ու՛մ», ո՞ւրնը «ու՛մ, որի՛ն»:

— Ամէնը, ամէնգը, մէգէլդօնք:

— Իրուր, իրար, իրանց—իրանց,

— Իմին, իմինիս և ակն:

Բ ա յ

ա) Օժանդակ բալի ձևերը, խարբերդի բարբառի համեմատութեամբ, հետևյալ պատկերն են ներկայացնում.

Բ ե ը ը ի ի խ ո ս վ. Ճ ա ն ի կ ի խ ո ս վ. Ի ս մ ա լ ե լ ի խ ո ս վ.

Ներկա

էմ || իմ, էս, է || ան իմ, էս, ան էմ || իմ, էս, է

էնք || ինք, էք, էն ինք, էք, էն էնք || ինք, էք, էն

Անցյալի անկատար

էի, էիր, էր էի, էիր, էր էի || ի, էիր || իր, էր

էի(ն)ք, էիք, էին էանք, էիք, էին էանք, էիք, էին

բ) Եղանակներն ու եղանակային ձևերի կազմությունը նույն է, ինչ մալր բարբառում:

գ) Դերբայներն են՝ անորոշ, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական և ընթացակցական:

Անորոշ դերբայն ունի էլ, ալ (Իսմայել գլուղի խոսվածքում նաև՝ իլ, օրինակ՝ ձըձիլ—ծծել, հարցնիլ, ընիլ, զրուցիլ, մսիլ—մըրսել, զինիլ) վերջավորութունն. ապառնի դերբայը՝ հլու, ալու, վադակատար դերբայը՝ եր, (ացեր), ենթակայականը՝ օղ, ընթացակցականը՝ հլեմ վերջավորութուններ։ Հարակատար դերբայն ունի թե ած (ացած) և թե ուզ, մուն վերջավորութուններ։

Հարակատար դերբայի ած վերջավորութունը հարադատ է բոլոր խոսվածքներին, մուն և ուզ վերջավորութուններից ավելի տարածվածը մուն վերջավորութունն է¹։ հանդիպում է նաև ածդան, որ հազվադեպ գործածություն ունի և պատահում է Իսմայել գլուղի խոսվածքում, օրինակ՝ չըղտաձգան «դեռ չգտած» (ածդան կազմված է հչ. ած—թրք. dan բացառական հոլովի վերջավորութունից)։

Խոնարհում՝ խաղալ

Սահմանական եղանակ

Ներկա— գը խաղամ գը խաղանք

» խաղաս » խաղաք

» խաղա » խաղան

Ներկայի շարունակական— գը խաղամ նը || նէ և ալն։

Անց. անկատար—գը խաղայի, գը խաղայինք

» խաղայիր » խաղայիրք

» խաղար » խաղային

Վաղակատար—խախցէր իմ, էս, ան. ինք, էք, էն

» էմ || իմ, էս, է. էնք || ինք, էք, էն (Իսմայելի խոսվ.)

Անց. վաղակատար—խախցէր էի, էիր, էր. էի(ն)ք, էիք, էին

» էի || ի, էիր || իր, էք, էանք, էիք, էին (Իսմայել)

» էի, էիր, էր. էանք, էիք, էին

(Ճանիկ)

¹ Ահա մեկ օրինակ՝

«Տուռը պացէց օ գըրազը վառմուն,

Ղուշ—թուէն յաթաղը ցըբմուն,

Օսգի թէլօվ պարցէրը յանէրը աըբմուն,

Խափուրմօվ փըլավը էփմուն,

Օսգի տըկալը վըրան դարգմուն» (Ս. Հայկունի-Մօքոս)

Հարակատար—խախցած իմ, էս, ան. ինք, էք, են

խաղուզ էմ || իմ, էս, է և ալլն:

Անց. հարակատար— խախցած էի, էիր, էր...

խաղուզ ի, իր, էր, էանք և ալլն:

Անցյալ կատարյալ— խաղ(ա)ցի, խաղ(ա)ցիր, խաղաց

խաղ(ա)ցի(ն)ք, խաղ(ա)ցիք, խաղ(ա)ցին

Անցյալ կատարյալի շարունակական— խաղացի նէ || նա և ալլն:

Հրամայական եղանակ

խաղա—խաղցէ՛ք

Ըղծական եղանակ

Ապառնի— խաղամ խաղաս խաղա

խաղանք խաղաք խաղան

Անց. ապառնի—խաղալի խաղալիր խաղար

խաղալի(ն)ք խաղալիք խաղալին

Հաբեադրաբեադ եղանակ

Ապառնի—դի (իսկ Բերրիում՝ բի) խաղամ, խաղաս, խաղա

» խաղանք, խաղաք, խաղան

Անց. ապառնի—դի(բի) խաղալի, խաղալի, խաղար

» խաղալի(ն)ք, խաղալիք, խաղալին

Թեական եղանակ

Ապառնի— խաղամ նը || նէ || նա || ընը || դէ || օ

խաղաս, խաղա »

Կրավորական բայերը կազմվում են վ ածանցով. դրանք խոնարհվում են հետևյալ կերպ.

Անորոշ ըղծական ըղծական սահմանական հրամայական

դերբայ ապառնի անց. ապառ. անց. կատարյալ եղանակ

շրդգվել շրդգվիմ շրդգվէի շրդգվա շրդգվիր—շրդ-

գրվէ՛ք

վառվել վառվիմ վառվէի վառվա վառվիր—վառ-

վէ՛ք

խառնըվել խառնըվիմ խառնըվէի խառնվէցա || խառնվիր—

խառնվա խառնըվէ՛ք ||

էցէ՛ք

Պատճառական բայերը կազմվում են ցըն, ուց, ցուց ածանցներիով, որոնց խոնարհումը հետևյալն է.

Անորոշ ըղձական ըղձական սահմանական
 դերբայ ապառնի անց. ապառնի անց. կատարյալ
 հաքցընէլ հաքցընիմ հաքցընէի հաքցօցի,-ցիր,-օց
 հէձուցէլ հէձուցիմ հէձուցէի հէձուցի,-ցիր,-օց
 լօխկըցուցէլ լօխկըցուցիմ լօխկըցուցէի լօխկըցուցի,-ցիր,-օց

Հրամայական եղանակ

Հաքցո՛ւր—հաքցօցէ՛ք, հէձուցի՛ր || հէձցո՛ւր—հէձուցէ՛ք, լօխ-
 կըցո՛ւր—լօխկցուցէ՛ք:

Ածանցաւոր բայերի մյուս տեսակները ամբողջովին նույն են
 մալր բարբառի հետ. այդպէս և անկանոն բայերը:

Ժխտական խոնարհում

Սահմանական եղանակ

Ներկա—չիմ, չես, չի խաղար, ուզէր

չէնք, չէք, չէն » »

Անց. անկատար— չէի, չէիր, չէր խաղար, ուզէր

չէանք, չէիք, չէին » »

Անցյալ կատարյալ— չխախցա, չխախցար, չխախցալ

չուզէցա, չուզէցար, չուզէցալ || չուզէց

Հրամայական եղանակ

մի խաղար, մի խաղաք. մուզէր—մուզէք

Ըղձական եղանակ

Ապառնի—չի խաղամ, չի խաղաս, չի խաղա

չուզէմ, չուզես, չուզէ || չուզիմ

Անց. ապառնի—չի խաղայի, չի խաղայիր, չի խաղար

չուզէի, չուզէիր, չուզէր

Հարկադրական եղանակ

Ապառնի—չըվդի խաղամ, խաղաս, խաղա

» ուզիմ, ուզես, ուզէ || ուզիմ և այլն:

Չ ա ն ո թ ու թ յ ու ն — Հանդիպում են սահմանական եղանակի անց-
 յալ անկատարի «չէր թրջէր էր», «չգրցան կղէր էին», «չի
 գըրցալ կղէր էր» և այլն ձևեր, որոնք հազվագյուտ են:

ՆՄՈՒՇՆԵՐ ԲԵՐՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

— Մինչեւ ինչ դարիքըս Խարիերթի մէջըն իմ մէնձցէր, հէ-
 րօ արբէր էմ Փէրիին մէջ: Դասէրգու դարէգանիս ամուսնացէր էմ:

Ամբշխած ախճիգ էի, երէսըս չէին դէսնար: Ախճիգներըս խումար
դը գազմէինք, գը խաղալինք:

Մէր մէնծէրը, օվ գուզէր ըլլա, ինչ գըսէին, գը լըսէինք:
Մէնծէրը չէս բաղվէր, ասդլած քէզի գըրադին մէչ գը ծըքա:

Պատմեց Աղապի Միլիտոսյանը (Բիդազյան)

(Բերիից, 62 տ.— Երևան, Նոր Արեշ, փ. 46, տուն 33):

* * *

Ալվա էգալ գարնա էրգան օրէրը,
Ալվա պուսալ առվէ գէրուգ խողէրը.
Առնէմ յարըս, էլլամ պարսի սարէրը,
Ահ ու զարով հայիմ գանաչ արդէրը:

* * *

Հա կընա գուկամ, դէ կընա գուկամ, էս գուկամ,
Գարմիր սօլէրըս հաքնիմ ու կամ, էս գուկամ,
Ալա փաշաս ձաձգէմ ու կամ, էս գուկամ,
Յար ալի, յար ալի, էրգու պըղօղ բադինջան
» » » լէլլէգին գարմիր խօնճան:

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐ¹

Էլլէմ պարսի լէռնէրը,
Հայիմ գանաչ արդէրը.
Ախ ըրի ու վախ ըրի,
Չէլալ փօրուս տարտէրը,
— Քա ըտ ըլ Մանուշն է. խէխճ ախճիգ... Ագօլին
սէվտալէն փօրուն տարտէրը չէլլար.

Թութին ձառը պօլօվըս,
Թութ չի գէրա փօրօվըս.
Ըս ինչ բըրշակ աշխար է,
Յար չի կըդա սըրդօվըս:
— Ըս ըլ Պանգօն է:— Տէ, տէ, ինքը քընժ է Ավէդը լալ է:
Մաղդանօս փունջ գաբէցին,
Ճիկէրիկըս տաղէցին.
Իմ սըրդիս չի սիրածը,
Իմ կըլուխըս գաբէցին:

¹ Այս և հաջորդ պատմիկները վերցրել ենք Գ. Երևանյանի գրքից, ասուգիւ և վեր ածել գիտական տառադարձության:

— Քան, ըտ ըլ Թարվիզն է, թըբխի թըբխընա
էլալ, Միքայէլը հիշ ուշմիշ չի կար ատ խեղճ Թարվիզին:
Տալղա-տալղա դընէ Բօլխի ձօվը,
Ինչ անուշ գը փըշէ սէվտայի հօվը.
Դէրը նասիպ ընէր էրթալի քօվը,
Առնէի մուրազըս ընգնէի ձօվը:

ՀՈՇԵ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Պաղչին մէյվան հասէր է,
Վարթը պալվէր մըսէր է.
Յարիս էրէսն էմ բաքէր,
Վախնամ մարըս լըսէր է:
Թութ պէքմէզին քաղսը գըլլի,
Էլին գըղան լար գըլլի.
Էլին գըղան առնօղը,
Շատ դարտէրու գէր գըլլի:
Խընձօր մունիմ խաձաձ է,
Խաձաձ դէղը արձաթ է,
Աղբանրս ուզէց չի գըլլի.
Աս իմ լարիս գըվաձն է:

ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

- Քարն էրթաս գանաչ կաս,
- Գըռնակըտ կէդինը չի կա:
- Դունդ լիք ու լիք ըլլի:
- Օֆ չի քաշէս:
- Օդքըտ քարին չի կա:
- Զըլիս ու ձաղզիս:
- Յավ չի դէսնաս:
- Զավօվ գէշով շէն ըլլիս:
- Ասգլաձ սիրելիներտ քէզի պաղշիլ ընն:

ԱՌԱԾՆԵՐ ԵՎ ԱՍԱՅՎԱԾՔՆԵՐ

Պանը օրվան մը, հօգը դարվան մը:
Յա պանիր պանըտ հանգչի, լա սանպն էգըտ հանգչի:
Դէրդէրը ամէն օր կաթա չուդէր:
Պարի օրը պարի լուսուն հալդնի է:

Արգէժօդ օրը հալէրուն ճուր դըվօդ շադ գըլլի:
 Հօվը պէրավ, հօվը դարավ:
 Ասօր ինձի, վաղը քէզի:
 Խէնթը կացէր է հարսնէդունը, հօս լավ է ըսէր, քընժ մէր դունը:
 Շանը գը զինէն, գիրունմընէ գամըչնան:
 Արինը արինօվ չէն վըլար:
 Մանկաղը մըշագին ծանօքէն չէն առնէր:
 Գալը գամնօդ էզան պէրանը չէն առնէր:
 Ամանը գընգի, ծան գը հանէ:
 Խաղ շադ կիդիմ, ծան չունիմ:
 Փըսիգնէրը դուրս էլան, մըգնիգնիը խաղ ինգան:
 Հաքէր էս, գարէր էս, էդէր էս փաշա, օլըրվիր
 էդէվըդ հայիր, էլի թամաշա:
 Մօրուքը ծըկէլը տուրին է, գըլլէլը տըժվար է:
 Հարսին՝ հօրանց դուն ըսէ, օդքը բօպիգ գը վագէ:
 Քիչ աշխադօղին շալէ շարիգ, շադ աշխադօղին չարէ
 (մագ) շարիգ:
 Կիրգըս նըսդէր է մօրուքըս գը սայրէ:
 Մարթ իր թանին թըթու չըսէր:
 Շունը հաչէլօվ կալ գը պէրէ:
 Հաժուն հալը գըթան գօվ մը գարժէ:
 Ախքաղը կօղսթան էլավ, լուսունգան առչի կիշէրօվ ձաքէցավ:
 Փէշըտ կէշին տըբափ, գըլլէ նէդէ:
 Ուխտը մաննի, գաշին իշու բան մը գըլլի:
 Ծաղարջը ճուրը դարէր է. ջախջախը գը փընդոէ:
 Մէր տուըր գը լագէ, ուրիշին տուըր գը հաչէ:
 Լավ լօղվօրը ճուրի փալ գըլլի:
 Ծին ու ճօրին գըռվըդին, էշը գէրթա վոտսորան:
 Դան գէրգէրին օրշնյա գէր չէն ըսէր:
 Նա մըլլի մուխ ա, նա գէրդըու ձուխ ա:

* * *

— Ըս օր պըլլէ քարը կըցի, կարինէրը շիգօնի բէս պօյ դըվէր էն, չային արդէրը դազդէր են, դազդէր...

— Ըս դարի ասգված էրէսնիս հայի նը, էրգու զօգ էգ տահա բըդէ առնիմ:

— Մէմըլ գէսնըք ինչ գը մընա ծանօքէրնիս, ընօլ ըլ Օվա-
 նէսը գը գարքինք ծըմէնը:

— Գեղը մէր ասդվածն էր, էթէ ուզէր գը բէյէր, էթէ ուզէր չէր բէյէր:

— Էս կիշէրն ալ բահարան բիգի չըլլամ ան.

— Ռահան պաճի, խուրպան ըլլիմ, հըլէ էգօ մէր ոսճիգը գը շօքըրվի, չի պըռնէր, ի՛նչ կըլօխըս բըղէ լամ:

— Հէլ, հէլ, հէլ. նօրէն էգան անդէրնէրը, պիթուն թութէրը ցէցքէցին դազը թափէցին:

— Վան, շան ծըկտիք, դիւնէրը (տնէրը) փըլցուցիք, փախէ՛ք, ահա գուկամ...

— Դըղա Կէվօ, սըիս նըսգիր ու փարդ պանիր: Տանտան — պապա տօթու է, գէրթա չի կար, գառնէ չի դար:

— Դըղան, ճուր պէրթի:

— Հան, պէրի:

— Դըղա շուգ էգուր:

— Հիմա գուկամ հա:

ՄԵԾԿԵՐՏԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Մէր Մէգգէրդը լավ դէղ էր. ճուրը, օտը շաղ իսդագ, գանաչ մօրիքը, ձաղիգներօվ բաղված հօղէրը, հանքէրը... Ինդէսագ օսգի հանքը պազվէցաւ. դաքէրըս էլավ հող փօրէց, օսգին թափաւ. լէցուցէր էր ձօցը. գանչէց, փիլաքան ուզէց, ըսէց.

— Փիլաքանը տիր էջնէմ, ջաջիմը փըռէ:

Օսգին, ի՛նչ օսգի, խօշօր — խօշօր, թափէցաւ: Զաջիմին մէճը օսգիսդանը գաբէց, փատտէց...

Գօղօրուհի ըսգըսէց. գը գաբէին, գը դանէին, գըմբըոցնէին, գը դէնէին, գըսբաննէին պօլօրը՝ գընդաքը, էրէխանէրին, մալրուգ էրէխօցը. գը թօփէին դըղաքը, հօր գը փօրէին, մէճը գը լէցնէին, սաղ-սաղ գը թաղէին...

Է՛հ, չիմ կիգէր, ինչ գու կա կըլխուս:

Վճուր կընացիր, վուր էգար,

Յէրի — լէրի, տուն իմ սըրդին տուր էգար:

Պատմեց Աննա Գասպարլանը (մեծկերտցի, 89 տ., ապրում է Երևան ք., Արաբկիր, փ. 42, տուն 10)

— Մէճգէրդը մէնձ քաղաք է էղէր. պէրթէրը շաղ ունի. էն — բէսի պէրթէր ունի օր: Քառասուն մանուկ ըլխաղէղը փօրված պան

մը դա, օր մարթ ընգնի || ընի, ծան չի գար հէջ. բա ճաղացնէրը...
Վէրչը, ինչ ըսէմ, թուրքը զօրք քաշէց մէր վըրէն. դուն—դէղ վա-
ռին բըռձան:

Պատմեց Կարապետ Սողիկյան (մեծկերտցի, 86 տ.
ապրում է Նոր Արեշում):

ԻՍՄԱՅԵԼ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Հազար ինը հարուր դասնըհինգին մարթըս կընաց Արզրում.
խաբար էգավ, օր գամավօր է. դանը լէս իմ մացէր || մընացէր, էր-
գու զըղաս՝ մէգը մի դարի ութ ամսըգան էր, մէգը չօրս դարէ-
գան էր:

Մէզի պէրին հավաքէցին. քլուրդէրումընէ մէգը հինգ հարուր.
հօկի բէլէց. էսդէղ մէք իրուր կըդակ: Ժողովուրթը փախան: Էլաք
կըցաք էգէղէցի. դէսնամ մըշէցի մարթ մը թաք գըգախի. ֆա-
ղալի լէ, ըսին: Մի օր տա գէլլա գէրթա խարփէրթ, հօն գըբան-
նէն. հէրօսի տիակը գը պէրէն պարսը դէղ գը թաղէն:

Մէնք ալ փախաք. քլուրդէրը մէզի գը բէլէին. անքամ մը
ախբօրըս գինը էգավ լալէն, ինձի գը գանչէ. ախբօրըս օղէրին դը-
գուն օրթէրը լէցված (գէրթալի իշ դէսնալի, օրթէրը օղէրը լցէր
էր, մարթ գըվախէր) պամբազը գըփաթէլի իշպիշկին, ասանգ գը
հանէլի օրթէրը:

— Զըմէռնէլի, լալլալի,— գըսէր ախբէրըս:

Շաղ գըսիրէանք իրուր, շաղ մօղ էանք. գըմաժէր գըղուս
կըլօխը, էրփ էգան, չօրս հաղ ճանդարմա էին. ծէրքէրնին գարէ-
ցին. գը դանէին Փէրին: Ծինը պէրէր էին, ծիին վրան էր. լացի,
կօռացի...

Նրան ձէձը, գէնքի, մավիզարի համար էր: Ընձի ըսէր էր.

— Էս ձառնէրին մէշըն էմ փօրէր, հուղկա օր բաննէք, դէղը
չէմ ըսէր:

Յարալի աղէն քլուրդի մը հանդըբէր էր. ըսէր էր.

— Ծէր հացը շագ իմ գէրէր, պէր ինձի հուսգա բաննէ, թուր-
քէրուն ծառքը չըլնիմ: Քլուրդը չի բաննէր: Ճանդարմանէրը գը-
դանէն Փէրին, բանդ գը նէղին. հուղկա մավիզար մը գը կըդնա,
պէրնէն գը տընէ ու գը խըփէ:

Զէնքը գը մընա. մէնք հէչ, ինչ օքուտ գը քաղէանք:

Պատմեց Եղսա Սողիկյանը (71 տարեկան):

ԻՍՄԱՅԵԼ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Ախ, ան ձերութան մէջ ընդած իք տոնէտուռ, մի ուր ըսահաթ չէղաք, դուրբէթի մէջ փրդաք գօրաք, առանց դրդի ու պարէգամի էրէս դէսնէլու դի մէռնիք, էրթըք, ախօվ-վախօվ գ'էրէգման դի էջնաք, չէղած մարթիք իմ դունը գուղէն, լէս հօսի խալդի ծանք գը հալիմ. ըսի զանէլու գըրա՞ց է...

Ս. Հալկունի, Մօքոս, Էքմիածին, 1896, էջ Բ:

ՃԱՆԻԿԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

—Մէր Զար-Սանջարն օր գա, Դէրսիմու մէնձ մասն ան ու շաղ ըլ կէղէր ունի: Շաղ մի աշիրաթնէր գալին ու գան ան կէղէրուն մէջ, օր հին աղէնէրը, բարբա գըռէր, օղար գէղէրէ էղած ու պնագոած էն ան մէր կօմէրը. անօնց շաղէրը մ'առան, անցան կացին. հիմա անօնց մինազ մէնձէրը Լսախ բանդն ու Օսման բանդն էն. մէգալնէրը շաղ պանի չէն ի կար:

Աղայիս ըսիմ, աղէզ մըղիզ էրան ինձի, օր հառգընաս: Հիմա իմ ան դարիքս դօխսան—դօխսանըհինգ գա: Յէփօր լէս դասնըհինգ դարէգան էի նը, աղայիս ըսիմ, ան մէր գօմէրը էնիչնրի ու դ'արանքիսէր գալին, օր անօնց մինազ չօրս հաղը կլխավօր էին:

Հա, անօնք իրէնց ծանքին զազ շաղ մի քուրդ աղանէր ունէնալէն զանգ, ան գէղաց հալէրն ըլ իրէնց մէջ թախսիմ (բաժանում) էրած էին, ինչու օր ամէնքն ըլ անօնց լէսիր էանք:

...Յէս օր քառասուն դարէգան էղա դահա ան գօմէրըն անգրէս էր: Աստու օրը մէր կէղէրուն մէջ թաքուռնէրօվ (վաշտերով) լէնիչնրիսէր, չանանէր, չարքանէր, առնավուտնէր ու ֆասլինէր գուկալին: Ու անօնք օր հօս գուկալին նը՝ մէր դըվընէրուն մէջ գը նըսղէին, գը գալնէին, գուղէին, գը խըմէին ու կիշէրնէրը գը բառգէին: Յէր օր հաց դուղէին, անվան—անվան (ամենից առաջ) դիշ քիրասի (առաջնավարձ) գուղէին մէրմընէ. օր չի դալէանք ան խալըսում չունէանք անօնց ծանքէն: Կիշերն օր դըվնէրնուս մէջ մընալին ան հարս աչիին չէին թօղուր, գը քաշէին ու իրէնց ձօցը գառնէին: Ըմը մէնք ի՞նչ գըրնալինք ընէր անօնց, օր թուր ու թըֆանք ունէին իրէնց ծանքին մէջ, ու մէնք ըլ հէջ պան մի չունէանք, հասգըցա՞ր, աղաս:

(Այս նմուշը վերցրել ենք Անդրանիկի «Տէրսիմ»-ից, գիտական ուղղագրութունը մերն է):

- Այ դըդա, մէղք էս, աղջինը կըլօխըտ գը գինէ:
 —էս բաղասխանը գուգամ,—ըսըց դըդան:
 Աղջինը ու դըդան նըսդան օդի մէջ, աղջինը հարցօց.
 —Դըդա՛, ըն ի՞նչ գէնդանի է. անսուն օր գարրի, մէ օր գը
 մէռնի, մէգա՛լ օր գը սաղնա:
 —Ան լուսնիագն է:
 —Ըն ի՞նչ մարթ է, իրէք ամիս սուք է, նէ գըքընանա, նէ
 գը բարգի, մարթու չէրէվար:
 —Էնի արէվն է:
 —Ան ի՞նչ մարթ էր, աշխըրքի պիթուն—ջանլի ջանավարին-
 մինէ խարաշ առավ, մի գէնդանումինէ չըզըրցավ առէր էր:
 —Ընի Լղըսան թակավօրն էր. լէրուը լըցէց ձօլուն վըրն,
 գէլթուն լաղն է լըցէ լէրդին վըրն, գըրազը դըվէց, վառէց. լօսը
 գարգից, ձօլուն մէջ ինչ օր ծուգ գար՝ էլան չօրը, էրգու մարթ
 էգան ծուգի թակավօրին ըսին.
 —Լղըսան թակավօր քումինէ խարաշ գուղէ:
 —Թակավօրը պէրանը պացէց, իրէք անկին քար ընգավ, դա-
 րին դըվին թակավօրին:
 —Բպա ըն ի՞նչ մարթ էր, չըդըվէց խարաշ:
 —Բտի մըրջօմին թակավօրն էր. Լղսան թակավօրը տարավ,
 սըրէց շուշի մէջ. պէրանը պըռնէց, մըրջօմը առաշուց կիդցավ, մի
 ցօրէն թէվի դագ բէլած էր. անդ մըրջօմի թակավօրը դասվէրգու
 դարի շուշի մէջ մընըց սաղ: Լղըսան թակավօրը հայավ շուշի մէջ
 գօլըրդի մըրջօմի թակավօրը. պանամ հարցուգ ինիմ, ըսըց.
 Հանէց, ըսըց մըրջօմի թակավօրին.
 —Տուն ի՞նչ գուգէիր:
 Հանէց ցօրնի գէսը ցունց դըվէց:
 —Ի՞նչ նսթ գառնէիր, ինչու պիթուն չէս գէրէր:
 —Շուշից գառնէի, բիթուն չէմ գէրէր, բէլքի թակավօր դաս-
 վէրգու դարի ան թօղէց, մէգալ գէսը գուգիմ:
 —Ընգա լէդքը ի՞նչ դի ինիս:
 —Ընգա լէդքը գը մէռնիմ, խարաշ չէմ ի դար:
 —Ան ի՞նչ է,—հարցօց աղջինը,—ասդվամ իվդիդա օ դէդմէր
 է, էն դէդմածին դահա գէնդանի գա:

¹ Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Բ, Մոսկվա—Վաղարշապատ, 1901, էջ 238—240:

—Աղ Ձէչէլ— քէրքէղն է, բնա մէն(ն)իլ չըգա, մինչէվ աշխարհքս սօնը:

—Ան ի՞նչ է, դարին մի անկամ խօրօզի բէս զր գանչէ, նէ էրփինքն է, նէ կէղինն է:

—Աղ Ձէչէլ— քէրքէղին խօրօզն է, էփ համբարձման լանը Ք(ըր)իսդօս համբարձավ, չօրս զին ծնոք դարէցին, Քիսդօս օրթալախը, իրանք պօլօրը վէր էլան, քանի օր կըլիւնէրը չէր արէր էլան, օր անալ կըլիսին, բնգան վոր:

Աղջինը մըղօցը անցօց՝ ըս զրդան ինձիս գտնէ, ըսգու կէշ հօդ գուկա, ի՞նչ ինիմ, աստիմ:

—Ըն ի՞նչ գէնդանի է, քառասուն օր կիշէր ցերէգ զը գանչէ. քառասուն օրէն էղէվ զը մէոնի:

—Ըգօր ժիժի (ճպոռ) գրսէն. կիշէր ցօրէգ զը գանչէ. զը մըննա իրա հավգիթի ի հալիթի մէշ, զը մէոնի, վախտն օր էգավ, ավլա զը սաղնա:

—Ան ի՞նչ է. էրգու թէվ ունի, չախութին ան արշուն մէ. էրգանութին ան արշին մէ, բօլն ան արշին մէ. իրէք ամիս սաղ զը մընա, ինը ամիս մէոնա:

Ուղէլու է, նէղէլու է, — ըսրց զրդան:

—Ուղէլու է, — ըսրց աղջինը:

—Աշխար ինչ գա, ժամ գուկա գէղնօցը:

Քամին, ձառը, խօը, ճարը կէղինն անթութէն ժամ գուկա:

—Ինչըէ՞ս կէղինը ժամ գուկա:

—Ինչ քորխանա ըսիս կէղինն դագը գա, զը գրի գը վառի. էնօր համար ժամ գուկա:

—Էրփինքն ան ժամ գուկա:

—Անանդ ժամ գուկա օ ասղէրը գր խաղա, ժամանագ զըլի էրփինքը ճաղչի քարի բէս զը տանա:

—Ինչըէ՞ս զը խաղա արէվը մարը մըղաձ ժամանագ, էրգու սահաթէն էղէվ արէվը ո՞ւր գէրթա:

—Արէվը զը մըննա դափէսը. դափէսին գոման (գեկ) գա, գօլըրվի, գոմանն ան հէղը գօլըրվի:

Աղջինը ըսրց, — Զիմ հավաղար:

—Իրիգվան քիգի զը սալըխնէմ, — ըսրց զրդան:

Էրփինքը բառաձ դէղը հալավ քարտուն օր քարտուն կիշէր արձէվ գուկա:

—Ըգ գարը դէսա՞ր, ըսրց զրդան, ըս գարը գօլըրվի գուկա... (լեռան անուն) վըրան, գըլօնա:

—Ան ի՞նչ մարթ էր, անասունը 12 դարի պանդ տըրէց:

—Ան Ըղըսան թակափօրն էր, խարճ ուղէց, խարճը չըղըվէց...
պանդ տըրէց:

—Ձաղիգ մի գար, մի սծն ունէր, վրբան ան չաղրր ունէր.
դազը հազար հազ զըվաղ ունէր:

—Սունգն:

—Ան ի՞նչ է, վերուցի դարգի, մէջ դէղէն քաշէցի օ տմեն դի
մէ մի գախէցի, չօր զարգի, ճուր հանէցի:

—Միուն թամքը, փօրքանչը, ասպանդազներն ու սանձը:

—Ան ի՞նչ է, նէ էրգիւնքն է, նէ կէդին է. օսդի զաֆասի
մէջ մէգ ասղուձօ ծոռքն է:

—Ան իսանիս հօքին է:

ՔՂԻԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՒ

Այս ենթարարառը խոսվածքների երկու խումբ ունի՝ հարա-
վալին կամ Հերդիֆի և հյուսիսային կամ Ալթուն Հյուսիսի. մալլ
բարբառի համեմատութեամբ Հերդիֆի խումբը ան ձայնավոր և գ՛,
ք՛ բաղաձայններ չունի:

Խոսվածքների մյուս խմբում այս գ՛, ք՛ բաղաձայնները լի-
նում են Է և Ի ձայնավորներից առաջ. փիղնալ—գիսենալ, քի-
շեր—գիշեր, զարգ՛իլ—զարկիլ, շալգ՛իլ—շալ(ա)կիլ և այլն:

Բաղաձայնական համակարգով ենթարարառու համընթաց է
Չարսանճագի ու Չմշկածագի ենթարարառուներին: Այդպես և գոյա-
կանների հոգնակիի կազմութեան ու հոլովման մէջ:

Օժանդակ բայի ձևերը.

Հարավային խոսվածքներ շյուսիսային խոսվ.

Ներկա—էմ, էս, ա. է(ն)ք, էք, էն իմ, էս, է || ա. ինք, էք, էն
կամ՝ իմ, իս, ա. ի(ն)ք, իք, ին

Անցյալ— էի, էիր, էր. էի(ն)ք, էիք, էին

Ժխտական ձևեր— չիմ, չիս, չի. չի(ն)ք, չիք, չին

չէի, չէիր, չէր. չէի(ն)ք, չէիք, չէին

Հյուսիսային խմբի խոսվածքներում սահմանական ներկալի ու
անցյալ անկատարի զը մասնիկը գործ է ածվում թէ բալաձէին նա-
խադաս և թէ հետադաս. օրինակ՝ գէրթան, գաբրիմ, գը նրոդէ.
վախնա գը, նալիմ գը, խօթէ գը, շալգէս գը և այլն:

Հարկադրական եղանակի ժամանակները ենթարարառում
կազմվում են նույնպես դի մասնիկով, միայն հետադաս գործածվե-
լիս եղանակիչը լինում է բիդի, օրինակ՝ արբէի բիդի, ըսիմ բիդի:

ՆՄՈՒՇՆԵՐ ՔՂԻԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌՈՎ,

ՀԵՐԴԻՖ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ,

Կացի պանադ, Պանդուրմա, սրժուր կացի Չանախալու, էդօ պերին մէզ էքսէմիլ: Սալաբանները մէզի հաց չէին դար. էս չառու- շին գուդալի հինգ խուրուշ, էտ իրէնն էր, քըսանն ալ գուդալի օր ինձի ուղէլիք առնա. ժողովուրթը չէր կիդնար օր ուղէլիքն իմն ա:

Ծոնը կուկար, հաց չէին դար ուղինք, սօվանձութան մար- թիդ գըգօգօրվին: Մէզ էլ դեսանք հինգ սուվար էգալ. ամէն մէզ ծնրաշի իր դասնըլազներով գալնան, ըսան:

— Նըսդիք, ծէր ջաշ էփօղը օ՞վ ա:

— Հալ ին. մէզի անունը Օվօ, մէզալինը՝ Սէդրադ, քըղիցի լին Կացին դանչեցին:

— Դըղօք, ըսով. չէս էգէր իմ, ծէր փըրգարարն իմ, շիդագ: ըսա, ընդծր իք, վճվ ա ծէր բէլուգբաշին:

— Մէր բէլուգբաշին Բօլաջլան Մարդըլօսն ա— Մէձ Նօր Կէղէն: Էգալ Մարդըլօսը:

— Բարալ բօլնընա, ծէզ գօղըրէր ին թուրքերը, կասնութը թը- նաքն բանիր խըրգէր իմ, պաժնէր իս:

— Ջիդըս օր զինիս ա շիդագը գըսիմ, լուգբաշին առէր կա- րէր ա:

Ըտ մարթըր դանչէց լուգբաշուն, ըսով:

— Ամօ՞թ, ըս մարթիքը բէլութանը գըրձառալին, նապադանը չէս դար ուղին. դաբէցէք, խըրգէցէք՝ քաղաք:

Մէր իրքերը պըռնէց. խըրգէց Բօլիս. լօթ հարուր վացուն մարթ ինք, հարիր-հարիր իծծուն նապ կուկար, էդօնք գըբար- րինք:

Բաշ չալուշը էգալ. պարէվ պըռնէցինք. չալուշները նըսղուդ էին:

— Դըղան, տուն դերդրուն դըղա Աղանջանն իս, ըսավ մէզը:

— Ըս մարթը հալ ա, ըսին չավուշները էլ խինդըցան: Մէր ձա-
նօթը ինձ պէրէց տըրէց քըշէսքին վերա. հասն ալ գէրա, աղէզ մը
արըէցաւ: Էդքը մէզ տըրին պանդին մէջ, առդանէրըս գօրէցին:

Պատմեց Աղանջան Մուրադյանը (75 տ., ապրում է
Շահումյանի շրջանի քղեցիների թաղամասում):

* * *

— Է՛, էս ի՞նչ կիզիմ, մէր էրգիրը աղէզ էր, շաղ աղէզ գարըէ-
ինք, արդ ունէինք, դուն ունէինք, գօլ, աձ, մաքի ունէինք: Միք
շաղ աղէզ գարըէինք:

Գօգօրումը եղավ, թալնէցին, էլանք փախանք կացինք. քէր-
թէրը բէնէցին մէզ: Էնգուց վերչը մէզ հանէցին, նօրէն փախանք
մըղանք մօրիսդանու մէջ, բալվլօղանք. օր չըսբանըվինք փախանք
էգանք դարի մը քէրթէրուն մէջ մընացինք, վերչը մէզ թօփ էրան
պէրին առուսի մէջ Գէզվա քաղաքը, էրգու ամիս հօն գէցանք:
Մէղի պէրին էրգըրում: Էրգու գարի ըլ հօն գէցանք, էգքը էգսք
Բոստանդան:

Պատմեց Թագուհի Գասպարյանը (77 տ., բնակվում
է Շահումյանի շրջանի քղեցիների թաղամասում):

* * *

Օջխարը գարինք սարը. դաքըրս էր՝ բուշուր դըղան, անօր տը-
րի ծօրին տէմ. էս էլա մալին վերէվր: Էլա, մօրմը լիքը, իշըքս օր
խաղօղ, խաղօղի բէս գախոված էր, փէշըս լէցի լէցուցի. մըմըլ
դէսա օջխարը թօվուց գալնուց էն, տաված կալի դունը տվրա. էր-
գու հաղ կալ. դէսա քի օջխարի վիզը պընէր ին գը քաշին, բօջօվ
գըզինին, օջխարը հէզէրնին դանին: Վէրէն դանչէցի:

— Վալ, Բէդրօս, օջխարը կալը գարով:

Յէս գըվազիմ կալէրուն էգի, գըղան ալ գուլա իմ էղի.

— Հառուէ, մէրթըր, էս վախիմ:

Դիօր հասա օջխարի շըլլին գըռէր էին. քաթ մի նէղիմ, իշ
գինիմ չին էրթար: Կալէրէն մէզը ցած իշավ, մէգալը ինձի գը-
հալնա:

Տէմէն գընդաքը լ գընիգնէրը, սար ին կացէր պարիք հավ-
քէլու, ծան հանէցին, կալէրը փախան: Օջխարը թօփի տէրի կէզին
տին, լէցի դըղին էոչի, ըսի.

—Տուն քըշէ՛ գէղի դին:

Էս էլ իչա օջիսարը շալգէցի: Գընդաքը կացէր ըսէր ին կալը
օջիսարը ճարթէր ա: Օջիսարը շալագըս էգա. պէրը գուգար:
Պատմեց Մրոյան Եղսիկը (70 տ., բնակվում է
Շահումյանի շրջանի քղեցիների թաղամասում):

* * *

Մալրամ թունիրը վառէր դընէրը մուխ էր,
Աչվուն զարուր քաշէր ունքէրը թուխ էր,
Մալրամ չաղըր զարգէր պարսը լեռնէրը,
Մէգ տին սիրին գարձէր, մէգ տին կառնէրը:
(Ըստ Եղսիկ Մրոյանի):

ԽՈՒԹԱ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱՄԲՈՎ

Օրօրու ճուրն անցանք էլանք ի Դարման,
Դարման աղգէգ մը գար, անուն էր Մալրամ,
Մալրամ չաղըր զարգէր Քրդվա լեռնէրը,
Մէգ տին սո՛րուն, մէկ տին կառնէրը.
Մալրամ թօնիր վառէր դընէրը մուխ էր,
Աչվին զարուր քաշէր ընքվինէր թուխ էր,
Մի լար, Մալրամ, մի լար, աչվիդ գավէրի,
Քէզ բըղդիդ գարքօղին դընապըն ավիրի:
(Ըստ Պետրոս Զրիսյանի, 53 տ.,
բնակվում է Շահումյանի շրջանի
քղեցիների թաղամասում):

Ախճիդ ինչո՞ւ քաղէցիր մէր բարդէղին վարթէրը,
Յէս մարիդիդ խօսէցա, հիմա կուկա դէրդէրը,
Դանիք էլլէլըս կուկա, տարվար նալէլըս կուկա,
Էգավ անցավ հալ ախճիդ, կըրգէր բաքնէլըս կուկա:
(Ըստ Պ. Զրիսյանի):

ԱՌՁԸ ՄԷԽԳԱՅՕՂ Է

Հայգազան դօդօրումին, փախին դարին էր. սաղ կէղով փա-
խանք. պօրօրը լնռնէրն ու ծօրէրը ինգած էին:

Գինա՞ս, էրգու ախպարրս գէրթան մօրիի մէջ, մինչէվ ա-
րէվը մարը մըղնալը դընըսդին. ննլին օր, մօրիին մէջը ծան մը
գուկա ॥ կուկա. չըվարմած դընըսդին: Կիդնան գը թուրքին աս-

գէրն է, վախճան ըզդէդէն գէլլան գրփախին: Գընիզը, ջըժէրը՝ մէգ դըղա, մէգ ախշիգ՝ գուկ ձընած ին, թօղնան գըրագին անաչը:

Ջըժէրը նալին օ ի՞նչ նալին՝ իզածը աւել է: Առչը կուկա, բո ջըժէրուն նալելօվ—նալելօվ ինքն ա գուլա, ջըժէրն ա գուլան:

Մարը գըպըռնէ ձիձ գուկա ջըժին, ջիժը չուդէր, վախնա գը, առչին նալի գը, սօսգա. գըմմէնն ալ առչէն գըվախնան. Առաւօ-գուն տէմը գըլլա. մինչէվ լուս ջըժէրը գըվախնան, գուլան:

Ջըժէրուն բարը մըդքին գընգընի, գէլա գուգա, նալի օր ջը-ժէրը գուլան, առչըն || արչըն ալ քօվէրը նըսդած: Ընուք կիդան մարթ է էգէր ջըժէրուն քօվ. էրգու ախպարըս ալ սօսդած գալնած գընալին:

—Մարքար, ըսա կալօղը մարթ է...

—Ձէ, արչ է:

—Կալ է, թօղ առչ ըլլա, մարթ չըլլա. առչը մէխըցօղ է:

Առչը կընաց. մընացին ջըժէրը անօտի, լացին հաց գուգին: Մարը գըսա հաց չըգա: Գէլլա էրգու ջիժը շալգէ կընա մէգ բըզ-գիգ ծօրի մը մէչ. գըղան չէր լար, ախշիգը շաղ գուլար: Իրան հօքուն գըսգըռնուն մարը ախշիգը խօթէ գը ճուրին մէչ ու խէխդէ. գըղուն շալգէ գը ու կընա մուրալու, մօրիին մէչ ապուռմինէ օղօր-մութին ուզէլու:

Ըգըէսօվ ազադվան. կընան գը քիւրդի մը գուն, օղօրմութին գուզէն:

—Հարսէ,— քիւրդըն ա գըսէ,— գըրնաս իկաս մէր գուն աշխադիս. լէս քէզ չիմ ըսըանէր, էգօ, պանիւր, հացըս գէր:

—Կիկամ աշխադիմ ջիժըս բէլիմ:

Ախպըրդիքը՝ Մարքարն ու Բօղօսը, էլան լաննէրը, կընացին գօրան, անօնք չիմացան ուր մնացին հարսը իրա ճըժէրօվ || ջը-ժէրօվ:

Պատմեց Սուլթան Մանգոլանը (68 տ., Հալդար-բեգ կամ Աղթուն Հուսեյն գլուղից, ուր ծնվել է ու ապրել մինչև 1918 թ.):

ՈՒՌՈՒՄԻ ՀԵ՛Ն ԷԳԱՐ

—Յէս մարթու կացի դասնըվէցիս մէչը. դասնըլթիս մէչը դավազ ունէցա: Հալգագան գօղօրումը էլավ: Գօղօրումին մէչ գը-դաս շալգէի փախա լաննէրը: Յէփ ժամանագ փախա լաննէրը, ձանօթ քիւրդին մէկուն հանդըրա. ան քօվն դանագ մը հանէց, գըվալ ընձի, չառի.

—Յէս ինչ գիտնամ տուն իմ մարթըս յարանէլ տանազը ինձի
պողատ:

Իրէք դարէգանս դրդաս գրսէ քի, տուն իմ հարրս մէսցուցէր
էս, տանազը պէրէր մարըս իսափէս գը. միք չէք չիք ուզէր տա-
նազը, միք ու մէր բախարի, մէռաք—մէռաք, մացիք—մացիք...

Քըշէրվա գէսին էլա զըղալիս շալվէցի, կընացի մարթուս
օրօշաձ դէղը. չըգալին. մընացի մէնագ ՝ մինագ: Կացի գէսարըս,
գաքէրըս գինը ՝ գաքրօշըս գինը առի դարի ըս գէղը (անօք չըփ-
լախ—մէրգ էին):

Իէսաք դալօշըս քիւրդէրը գարգէր ին, չէ մէռէր. լացալ:

—Հարս, ըսալ, ինձ էլ ազադի:

Յէս մընացի նօրէն էս քիւրդին դունը. ձալքը քանդին մէզի
գօխուցին ձալքին մէշը. ըսին թուրքին անկարնէրը փաթթին դու-
նին պօլօրը:

Ինչ անիմ լէս. դալըս հիվանդ դէղէն, դրդաս գուլս, ծանէն
գիմանան, թուրքէրը կուլան.

—Մարդիգ, մի լար, ծանըս գրդրէ, թուրքէրը դուլան մէզ ը
դրդանին, լէս գըսիմ: Մարդիգը ծանը գըռէց:

—Հարս, ինչու հըմար հօքուրըս դարին. դանին հարցնին
դը, վէ՛յ ա խըփէ, — գըսէր Մարդիգըս:

—Սուս, ծանըս գըդրի:

Դըղաս ծանը գըդրէլու բէս, լէփ թուրքէրը կընացին քընա-
ցան, էրդա թըֆընկի ծան իմացա. տու մըսէր դալըս դարին նօ-
րէն-նօր գարգէին:

—էս քիւրդին գընիգին հէդ խօսացի.

—էս ջամփաս էրթամ բիդի, աս դէդ գէցօյ չիմ, — ըսէցի:

—Ուղէլվանք արնիմ հէդէրնուդ, օր չէս գէնար, վախնաս,
կըցէք ՝ կընացէք:

էլաք շալագչինը պըռնէցիք կացիք. քիւրդին ըսի.

—Ինձիս դանէս մէրին դունը:

Կընացիք էլաք մօրիին մէշ, քիւրդը շալագը ծըքէց, վախուն
փախալ: Ինչէլ ըսս ջամփա էլաք՝ էս, գէսարըս, գաքէրըս գը-
նիգը եվ դըղաս: Արգէվին պըռնվանք քիշէրը. կըցիք քիւրդէ-
րուն սէլիգին դունը. միք մընացիք արգին մէշը, գէսարըս կընաց
տուըր գարգալ.

—Աս վէ՛յ է տուըր գարգալ...

—Պարսէդին մարն իմ:

—Վէ՛ր Պարսէդին մարն էս:

—Մանգօլից Պարսէղին մարն իմ:

—Ախճի էլէք տաւը պացէք, Մանգօլից Պարսէղին մարն է:
Մէզի նէրս առաւ զընիզը, հաց տըրաւ, օքնութեան չըզըրցաւ ք
հաց ուղիք, Յաթաղ պէրին մէզի, լէլաք բառգաք:

—Ծէր զըզաքը ուրդէ՞ղ ին,— ըսաւ սէլիդին զընիզը:

—Յէս ըսի ասինչ դէղըն ան (Ղըրդօլին դունը):

Սէլիդին ըսի.

—Գըրնմա իսարար տար անօնք կան:

Սէլիդը մէզի խառնէց մալին մէչ, դարաւ լնոնէրը, քարափի
մէչը տըրէց, հացով—ճըրով մէզի բալէց. լէզըը կընաց զըզօցը խա-
բար զըվէց. զըզաքը եգան:

Մէզ ըլ ըն դէսաք օր, մէզը թըֆանզը ծանօթին էդաւ մըը
կըլխուն դախնաւ. գէտուրըս վախցաւ քարափէն փախաւ. զըզան
թէվը պըռնէց.

—Մարիկ մի վախնար, լէս իմ,— ըսաւ էրիզըս:

Աղգէց մէզ առաւ քննրդէրուն աշիւթնէրուն կընաց:

Ըտ հէզուն էս ձանդըրովօք էի, էրիզըս ուղէց ինձի ըսբաննէ,
օր թշնամու ծանօք չանցնիմ: Յէս չըթօղի ըսբաննէր ինձի:

—Գարէլի լա գաբրիմ, ըսի:

Էրզու—իւրէք հէզ փօրցէց ինձի ըսբաննէր:

Փախաք անցաք Զուրուն, սրալ Թօրօսի վանքը, ընդէդէն ալ
ուռուսի հէզ էդաք Հայաստան:

Պատմեց Սուլթան Մանգոլանը:

ՍՈՒՐԲ ԹՈՐՈՍ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Սուրէն իշխանը զըտարաշղ էր. իշխանին զըզան քըրիստօ-
նյա էդաւ. հանր հապատագլաւ, զօրք քաշաւ զըղուն վըրան: Դը-
դան, Թօրօսը, փախաւ սարէրը, էդաւ Օղլան վերան սարին դազը,
էզէզ պարսը ձառ մը դարձ մէչը փօրված, մըղաւ ըզօր դավո-
շին մէչ:

Սուրէն իշխանը քաշէց զօրքը, սրղօցով ան ձառը զըլըէց.
զըզան էդ դավուշին մէչէն թէվ առաւ թըռաւ՝ առգծու Կրամանով,
կընաց Լուսավօրիչին մազուուր դալալի (ժալոի) վրա. հօդ նէզով
դէրգին, բանվաւ. հօն դէզը Լուսավօրիչին մազուուր շինէցին:

Աղանգ զըսէին մէր մէնձէրնին, էս ալ զըսէմ ընօնցմէ լը-
սաձրս:

Պատմեց Արմենակ Բեդրոսյանը (72 տ., Ս. Թորոս
գլուդից, ուր ապրիւ է մինչև 1918 թ.):

ՄԻՐԱՔՆԵՐԻ ԲԱՐԲԱՈՒ

Դերսիմի բարբառային քարտեզը շատ պակասավոր կլիներ, եթե ախտեղ իր արժանի տեղը չգտներ միրաքների բարբառը: Այս բարբառը, ինչպես ասվեց վերը, խոսվել է Լեոնային Դերսիմում: Սա պատմության գիրկն անցած բարբառներից մեկն է, հայերենի վաթսուների չափ բարբառների ու հարյուրից ավելի ենթաբարբառների ու գլխավոր խոսվածքների մեջ այն բացառիկը, որը իսպառ վերացրել է ջ, ճ, չ և ժ, շ բաղաձայնները, ժողտաբնիկով դրանք ձ', ձ, ց, գ, ւ հնչյուններով:

Ի մի հավաքելով բանահավաք Ս. Հայկունու, Անգրանիկի և պատմաբան Երևանյանի կողմից այլ բարբառով գրի առնված նմուշները և հետևելով մեծանուն հայագետ Հ. Աճառյանի կողմից այլ նմուշներից մեկի գիտական տառադարձությանը, դրանք գիտական տառադարձության ենթարկելուց հետո կազմեցինք բարբառի համառոտ նկարագրությունը: Այլ նկարագրությունից օգտվելով, ստորև տալիս ենք բարբառի համեմատական ուղղագրվածը:

Լեոնային Դերսիմի հայերը ազդյուրենքում հավասարապես հիշվում են նաև միրաքներ, միրաքցի կամ Տեր Օվանցի¹, բուն միրաքները «տարածված են ամբողջ Դերսիմի մեջ. յուրաքանչյուր բնկի մոտ 2—3 տուն միրաքցի բնտանիք կը գտնվի²», բացի, իհարկե, այն միրաքներից, որոնք ապրել են 5 և ավելի տներից բաղկացած գյուղակներում ու Տեր Օվան, Չախուր, Էքրդ, Հավլուրի, Թորոտ, Հարտիվ և այլ գյուղերում:

Ապրելով քրդաբնակ միջավայրում, միրաքները «մեծ մասամբ մոռցած են յուրյանց մայրենի լեզուն»³, բայց «Գրեթե ամեն

¹ «Միրաք կամ միրաքցի կը կոչուին այն փոքրիկ ժողովուրդն, որք Դերսիմի մեջ կը բնակին. իւրեանց քաջութեամբ Դերսիմի քիւրդ քէկէրու ու ժողովրդեան մէջ համբաւ ունին և համակրանք գտած էն», «Արարտ», 1896, էջ 134:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 84:

գերսիմցի (=միրաք—Ռ. Բ.) ստիպով ինչ գիտե հայերեն, սոքա բացի հայերեն կը խոսին նաև թուրքերին և քուրդերին...»¹:

Ինչպես վկայում է Ս. Հայկունին, քուրդերն էլ գիտեին հայերեն՝ միրաքները բարբառը. գերսիմցի քուրդերը «թուրքերին և հայերեն խոսած միջոցին չ և չ տառի հնչուն չնշմարվիր, առաջնուէն տեղ ց՝ իսկ երկրորդին՝ ա տառներն կը դործածեն»²:

Դրան իբրև ապացույց է Անդրանիկի գերի ընկած միջոցին մի քրդի հետ ունեցած զրուցից «Նմուշների» բաժնում բերվող պատասխիկը:

Միրաքների բարբառի բնորոշ հատկանիշներից Անդրանիկը հիշում է այն, որ չեքքաւ բառը հնչում են ցեքքաւ, «որովհետև միրաքյաններու բարբառին մեջ չ և ջ հնչյուններու փոխարեն միշտ ց կհնչեն, իսկ շ-ի ձայն երբեք չի լսվիր, օրինակի համար շաքաւ ըսելու փոխարեն կըսեն սաքար, փոխանակ գեշ ըսելու՝ կըսեն գես և այլն:

Այսպես շատ տեղեր տառերու հնչյունները փոխելու են, օրինակի համար օ-ի տեղ ծ, ծ-ի տեղ զ և այլն»³:

Ամփոփելով հիշյալ ու իր անձնական տեղեկությունները Հ. Աճառյանը գրում է.

«Ե. Տիրսիմի դավառը զարմանալի նորութիւն մ'աւ կ'ընծայե. օ, ջ, չ ձայները կը վերածվին հոս (ծ, ձ, ց ձեւերին անցնելով) ձ, ձ', ց. իսկ չ կը դառնա ա. ինչ. ճերմակ՝ ձերմազ, ջուր՝ ձ'ուր, չամիչ՝ ցամից, մեջը ջուր չիս՝ մեցը ձ'ուր ցիգա, քաշեցի քասեցի են»⁴:

Ահա այն բոլորը, ինչ հայտնի է միրաքների բարբառի մասին:

* * *

Միրաքների բարբառն ունի 33 հնչույթ, որոնցից ձայնավորներ լոթ՝ ա, օ, է, ը, ի, ու, օ. բաղաձայններ՝ քաւ, վեց՝ բ, բ',

¹ «Արարատ», 1896, էջ 133:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Տէրքիմ», էջ 184, Մանսթութիւն:

Նույնն է առում նաև երեանյանը. «Միրաքները մինչև վերջ պահեցին իրենց ուրույն բարբառը որ Չարսանճազի գավառաբարբառն էր բնորոշվի բանի մը բաղաձայն դիրերու տարբերութիւնը, ձայնավորներու ձեւին կամ կազմութեան տեսակետով: Միրաքեանները չեն գործածեր հետեյալ բաղաձայնները, Չ. Զ. Ծ. Ժ: Ասոնց փոխարեն կը գործածեն Զ, Զ, Ս, Զ: Օրինակ՝ չեկաւ—ցեկաւ, ջուր—ձուր, ժամ—զամ, ջուն—սուն»:

⁴ Էմինյան ազգագրական ժողովածու, 1911, էջ 169:

փ, գ, գ', փ', ք, ք', դ, դ', ր, ձ, ձ', ց, զ, լ, լս, հ, դ, մ, յ, ն, ո, ս, վ, ր. երկբարբառներ չկան:

Ձայնավորների հնչյունափոխության մեջ նկատվող տարբերություններից կարող ենք հիշել ե>է փոփոխությունը, որ տեղի է ունենում նաև միասնակ բառերի սկզբում:

Ինչպես խաբեբրդի բարբառում, այնպես էլ այստեղ, պակասում է խուլ պայթական բաղաձայնների շարքը: Բաղաձայնական փոփոխությունների մեջ նկատելի են հետևյալ տարբերությունները.

ա) է և ի ձայնավորներին նախորդող զ-ն դառնում է գ'-գ'ի-սեր—գերեր, գ'երեզման—գերեզման, գ'եղ—գերեղ և այլն:

բ) Ձայնեղ պայթականները մնում են ձայնեղ, այսինքն՝ շրնչեղ չեն դառնում այն դեպքում, երբ հաջորդում են սնգալին մ', նի բաղաձայնների:

Ծանոթ թուլություն. — Դրանք անփոփոխ են պահվում նաև թուրքական փոխառություններում:

գ) Բաղաձայնը ձայնավորից և ր բաղաձայնից հետո ձայնեղ կամ շնչեղ ձայնեղ պայթական չի լինում այլ՝ շնչեղ խուլ օրինակ՝ բաք—պաղ «պաշ», ձրաք—ճրագ, բաղարաք—պատարաղ, մարք—մարդ, վարք—վարդ, ձարքել—ջարդել, սուրի—սուրբ:

դ) Զ բաղաձայնը խաղաղ վերացված է. անցնելով ձ-ի որակի՝ ենթարկվում է նույն փոփոխության, ինչ ձ-ն, օրինակ՝ ձ'ուր—ջուր, եձ'եր—էջեր «իջնել», փեձ'—բեջ:

ե) Է, ի ձայնավորներին նախորդող կ>զ-ն դառնում է գ' էլի-գ'իլ—երկեր, զարգ'ել—զարկել:

զ) Զ բաղաձայնը վերացված է. անցնելով ձ բաղաձայնի որակից, ըստ օրենքի դառնում է ձ. ձրաք ծրագ ճրագ, ձաղ'րվել ծաղբիլ—ճաղբիլ, խիղձ—խիղձ խիղճ, ձանցնալ ծանցնալ, ձօր—ծոթ—ճոթ, բուձուր—բուծար—պուճուր, զըլիձ կամ զըռիձ—գըրիձ—կորիճ:

է) Ի և է ձայնավորներին նախորդող ք-ն դառնում է ք'-ք'ի-գի, ինք'իլ:

ը) Զ բաղաձայնը վերացվել է, փոխարինվելով ց-ով. ինց—ինչ, ցգ'ամ—չգամ, ցօրս—չորս, գանցել—կանչել, աց—աչ, ցափել—չափել, խացօ—նացօ «նաչատուր»:

Նույնը տեղի է ունենում նաև թուրքական փոխառություններում. օրինակ՝ ցախմախ—թրք. şahmaq, ք'իցէ—թրք. kiçe, ցըփօք—թրք. çubuk, ցանաղ—թրք. çanaq, ցըլըղցօց—թրք. çaplag-ից:

թ) Վերացված են նաև ժ ու շ բաղաձայնները. ժ-ի տեղ գործ է ածվում գ, իսկ շ-ի տեղ՝ ա:

ժ > գ—գամ—ժամ «հեկեղեցի», դէո—ժալո, սարգում—շարժում.

Շ > ս—սաղ—շատ, իսիւէլ—իշիսել «համարձակել», փուս—փուշ, սուն—շուն, սաուն—աշուն, սիգադ—շիտակ և այլն:

Այդպես և թուրքական բառերում. փասա—թրք. paşa, թամասա—թրք. tamaşa, սէսիանէ—թրք. seşhane «հրացանի մի տեսակ», փառլամիս—թրք. parlams:

Գոյականների հոլովման մեջ կարևոր երևույթ է բացառական հոլովի կազմութիւնը. այդ հոլովը կազմվում է ոչ միայն և մասնիկով, այլև՝ ից և ուց մասնիկներով. օրինակ՝ «Յաղա (երևիս) ցունէցող մարթըն ըլ խրմա մսգուց, գուզօփա», «Սւսդնւց գուզ՝աս լուսիգ—մուսիգ»:

Օժանդակ բալի ձևերը.

Ներկա— իմ, իս || էս, է || ան—ցիմ, ցէս || ցիս, ցէ || ցի

ինք || էնք, իք || էք, էն—ցինք, ցիք || ցէք, ցէն

Անց. անկատար.— էի, էիր, էր—ցէի, ցէիր, ցէր

էինք || ինք, էիք || իք, էին || ին

Սոնարհւող բալի սահմանական ներկան կազմվում է սովորական նախադաս զը մասնիկով, որ միաժամկ բալերից առաջ լինում է գու՛ն:

ՆՄՈՒՇՆԵՐ ՄԻՐԱՔՆԵՐԻ ԲԱՐԲԱՌՈՎ

Ա.

Անքան² տեսալ օր Կիրօն տակրին մէց է. ցօրս գին պատի պէս

Անքան դէսալ օր Գիրօն ապրին մէց է. ցօրս դ՛ին բադի բէս պատած է.— Օվանէս, ըսըց, ինց կինէս, ինձի պարտթ կիւլլէ հասուր: Բաղած է,— Օվանէս, ըսըց, ինց գինէս, ինձի բարութ գիւլլէ հասուր:

¹ Դատելով «Նմուշներէ» բաժնի վերջին տեքստից, բայաձեին ետագաս գործածութեան դեպքում սովորական է զա կամ զահա || գրիս մասնիկը: Բայց թէ որքանո՞վ է հավաստի սահմանական ներկայի այդպիսի կազմութիւնը, ստուգել չհաջողվեց, որովհետև մի քանի բարբառով խոսողներ չգտանք:

² Այս և հաջորդ պատահիկները վերցրել ենք Մ. Հայկունու «Դէրսիմ» հոգ-վածից, «Սարատ» 1890, էջ 183—184: Հեղինակը գրում է. «Կիրոյի եղբայր Ղամբարն դեռ ողջ է. այս պատերազմի մէջ իւրեանց գործունեութեան վերայ հետևյալն պատմած է, որ իւր բարբառով կը դնէմ այստեղ: Թե որքանով է հարազատ զրի առել Հայկունին, կարելի է տեսնել այդ նպատակով բերվող այս

Օվանէսը ղենց օ մէր աղան ձինը հեծկը փախեր է, տեսալ

Օվանէսը գ'նըց օ մէր աղան ձ'ինը հէձէր, փախէր է. դէսա
օր Կիրօն թուրը ցլաղցօց, թուրը փառլամիս էղաւ, ես էալ ըս գիուն
օր Գիրօն թուրը ցլըլըղցօց, թուրը փառլամիս էղալ լէս տլ ըս գ'իուն
քասնցի, թուրը փառլամիս էրի օ, Կիրօ, մի վախիր: Ընխաղըր
քասնցի, թուրը փառլամիս էրի օ, Գիրօ, մի վախիր: Ընխաղըր
հաեա օ, ցորս սուարով տալիս հեծած, ամեքուն թուր մի նետեցի.
հալա¹ օ, ցորս սլաքով դալիս հէձած, ամեքուն թուր մի նէղէցի,
ցորս ձին էալ պարկեցուցի, մէկ մարդուն էալ գլուխը կըլընցի, տեսալ
ցորս ձ'ին տ բառգէցուցի. մէկ մարթուն տլ գ'լօխը գըլընցի, դէսա
օր փասան կըսէ.— հա պապամ օլասոդ հա: Յի գիտեր օ ես իմ,
օր փասան գըսէ.— Հա՛ բարամ օլասըզ հա: Յի գ'իղէր օ լէս իմ,
ընի գիտէ թէ թուրքէր Դամբէրն է բռնած. ցըսէր թէ հինգ հոգի
ընի գ'իղէ թէ թուրքէր Դամբէրն է բռնած. ցըսէր թէ հինգ հօքի
թրէս ընցուցէր իմ, անքան տեսալ օ Օվանէսը կիւլէն հասոց, ըսըց.—
թրէս ընցուցէր իմ, անքան դէսա օ Օվանէսը գիւլէն հասոց, ըսըց.—
Մի վախէք, աղբրտանք. զու մըսէր, թապուր մի տակըն կէսն է
Մի վախէք, ախր'րգանք. գ'ու մըսէր, քարուր մի ապրիկն գէսն է
մնացէր, մէր աղան էալ էլեր թամասա կիւնի, իրկուն գցիք քառսուն
մնացէր. մէր աղան տլ էլեր թամասա գիւնէր. իրգուն գ'ցիք քառսուն
օսկի տուէց, լ'նց ինիմ:
օսգի տվէց², ի'նց ինիմ:

Բ

—Էլաք³ հինգըս ան, լէս, Օվանէսը, Մինասը, Ագօրը տ մէր
Գիրօն, գ'էղի ցորս գ'ին սաճայաղի գալնաք: Օվանէսին ըսի,— գ'ու
գըլըրիձ իս, ինց ինիմ օ խղձօվ իս. մոս էրգու սահաք դար, Օվա-
նէսը ձամփէցի, փէգաղ մը տուալ էգալ. մէգ—մէգ գ'էրէգմանի
բէս փօրէցաք. բեզը ձ'էոքը ձօցը էգալ, հալալ օ խզմէրքըրէրը
էգած ցէ, վանլ—վանլ ըրըց, հէմալ ձ'իճնու նալի ձ'անը էգալ, սահ—
սահ—սահ—սահ, դասնը հինգ հազար մարդ քօփվան, օ դի ձաղ-

տեքստից: Նույնպիսի մոտավոր ճշտությամբ են գրի առել նաեւ Անդրանիկն
ու Երեանյանը:

Առաջին տողերը բերում ենք ըստ Հայկունու, իսկ երկրորդ տողերը՝
ըստ Հ. Աճառյանի տառադարձության:

¹ Պետք է լինի հալա.

² Պետք է լինի ղվէց:

³ Պատմում է նախորդ նյութի ասացող Դամբէրը:

բըվին գէշը մըննան. դէսա Բ'առուա Մ'ահմադ աղան էգալ. գ'ըլ-
խուս վէրդին գալնալ. բարգա օ ինձիս ցի դէսնա: Թուրըս գա-
մաց-գամաց քասէցի, դէսա օր Լամայիլ բէգըն ըսըց.— Սարվէցէք
դէշին ցօրս դին... Մահմադ աղան քսեց օ ընցնի, սեխսանին քե-
րիզը թօխանմիս էղա. գ'ոլլին գ'ցէր անցէր Լամայիլ բէգին ճիւռն
դիւր էր. էն խղի հայն Օվանէսի սեխսանի ճանը էլալ. մէր Գի-
րօն Թուրըս ցըլըրըցուցէր հա զը գինէ: Մի սահաթ քսէցաք, հագ-
գօ, լուսցալ. Թափէցաք Գարմիր Վանուց ճօրը, հայնք յէգէվիս,
մարթ ցըգա. զանցէցի.— Օվանէս, քէշ դէսնամ, գըլրիձութան օրն
է, գ'օզիկն դօնդոզմ: Դէսա օ Օվանէսը Թուրըս ցըլըրըցօց, զար-
դալ գ'ըլօխը գըլրէց, յէս նլ վանդին գըլրէցի, դըղաքն նլ Թըմ-
բէն բաշլալէցին գինիլը. ձարդէցաք, բարուքը գ'ոլլին թըմալ:
— Գիրօ, ինց գ'ինիս. հասիր էգօ դէս օր օլըվան մէր վըրա.
ի՞նց դի ինիք... Բեզն նլ էգալ դէսալ օ հանիր իք Քըռիգ դերին
զըլօխը, — Հա', բարամ օլաւըզ, ըսըց¹:

Գ.

— Բիզի օր ըսիմ², էլա գ'ացի գէշ մըղա. սվտին (շնորը)
բաշլալէցին գօս ինիլը. աղան բօռաց, — «Հաղար գէցէք»: Յէս
ուսուլօզ բաղին սվաքը նըսդա. սըվին Թօփվան գ'ըլխուս վըրա
դէրի էրգինք հայն. սանը ասղը էլէր էր. սան աղօթքը ըսի, սըվ-
նին գ'ըցին ինքիւր դէղը բարգան: Գ'ըցի դէսա ձըրաքը գը վառի,
աղան նլ ցըրօխ գը խըմէ. յէս նլ մի դալղա դէշ քօլօզըս վան-
առի, ցախմախ գարգի քօլօզիս մէց, ցըրօխ մի քասէցի:

Մինաս աղբօր օր ըսիմ, էլա, գ'օմու դուռ դասվէրգու բ'ալլի
ունի, բ'ացի, նէրս մըգա. հերիքը օդքը էրգընցուցած էր դ'ըռան
էսգին հէզ:

Թուրըս ցըլըրըցուցի, քըրդու օդքը դէն քսէցի, քէշի օր
ըսիմ, օր արթընար Թուրըս գի գինէի. ճիւռ օդուցը զագ քիցի գա-
բէցի, քասէցի դուրս. Գիրօն հէձուցի, յէս ճի հէձնալ ցիմ գիդէր:

— Գիրօ, ըսի, քէշի դէսնըմ, իմդար գալդի սանա:

Քուրըր արթուն է էղէր, գիդէ յէս Դամբէրն իմ, վախուն ձանցէ
զըվէր. օր էլա դուռը, բօռաց. — Ձին դարին: Էլան դո՛ւռը խառնվան
իրուր էննիզօլ, ձմձմիզօլ, դնօլ, մարթօլ. հայն օ աղան էլալ. —

¹ Երեանյանի գրքում սույն շրույնն ավարտվում է հետևյալ նախա-
դասութեամբ, որ մեջ ենք բերում նույնությամբ. «Վէր հասըլ ձարգանին
ձարգէցիք ու մէկալն ըլ գլուխին առին ու փախան»: —

² Պատմել է նույն Դամբարը:

Հնա՛նքնէցեք, հնա՛նք, վե՛րք օ հա՛ւաք. քեզի օր ըսիմ, լըսէց Ղամբէրն է
դանօղը, յէդիս ցեզան. հայն օ աղան առէր խըզմէթ քըրէրը հա՛ւաք,
քօվուս ընցա՛վ, գ'իսէր էր, ընցան, ինձիս ցի գէսան. յէս էլա ձառի
վրա, էնօք գըցին ու յէգ դ'արցան, ձառի դագ հզան քօփվան, դէ-
սա օ աղան գըսէ. — Ձէզի բէս քառսուն օր թէ բէյիմ, մէգ Ղամ-
բէր գը բէյիմ: էնօք գ'ըցին, էղա օր էրգու հօքի հօնի գախուգ էին.
մի թուր գարգի, դէսա օր լըխ—լըխ—լըխ ընգան:

Դ

—Նըգուլին դի զինիմ:

—Դու մի վախիր, բեգ, էգուց դու քամասա գէնիս, բիթուկ
թըրէս դի անցնիմ. իմ թուրըս գէձագի գըդօր է. 100 օսգի դվէցին,
ցիմ դըվէր:

Առախնեք, հորինված միրաքնեքի մասին

—Քիզի օր ըսիմ, մէնձ բահըը հա՛ւաք, մի ձօթը գ'արուն էր,
մի ձօթը ասուն էր. ըս դարի հա՛ւաք, էրէս ցի դըվաք, գ'նըց, ան
ցեզա՛վ:

(Զարսանձագի գլուղերից մեկում պատարագ տեսնելուց հետո
միրաքցին ասում է)

—Ան խըտի հայն օր գըձգին գէլին, իրարու փէձ գը խաձնէն,
վախէցա իմ փէձ խաձնէն փնդ առա փախա:

—Յէ ըդօր բասդում բադարաք գըսին, ըս մօրուքը իրէք հէդ
է գէսէր:

—Տէր Բարա զէր գէրթըս...

—Զադիգ է, գ'էրթըմ, սըրփութին դի դամ:

—Յէ, դէրդէր. գախի, բ'ան դի ըսիմ, օր գ'ըցիր մէր դունը,
մէր դըդին սըրփութին գուր, օր էս ցգ'ամ նը, գը լընըս ցանաղը,
գ'օցիգ գըդալը գը ցքիս մէցը, յէս իրիգունը գուգ'ամ, գուղիմ:

(Թորիկ Բաբարին ցույց տվին կրիան ու ասացին)

—Ըսի ի՞նց է:

—Ըսի սուրփ է. բ'էրէք վրան մօմ սարինք: (Կրիայի պատ-
յանին մօմ են շարում, կրիան վառվելով փախչում մտնում է մա-
րազը. վառվում է):

—Ըսի ի՞նց է...

—Լօս է էձ'էր. արէ՛ք դամ սինէնք:

Մըզրա (Մնձուրի) լանան լէս գ'ուգամ¹
 Քըրդընէր իմ ու գուլամ...
 Ուր գ'էրթաս, աղէ'դ լարըս,
 Բաք մի ցէ, էրգուք գուգամ:
 Սիլա—փուսաթ (զենքեր) փէձգըլլա (կշողշողա)
 Դէսէ'ք լարըս ուր գ'էրթա.
 Նօր ձըլած բէխէրին մաննէմ
 Իմ թօլ սըրդիս ուզ գուգա:
 Լուսընգա գ'իսէր դ'ուրս էլա,
 Մուգուրն անուս գըցօլա,
 Գըցօլա վըր մէձ սարին,
 Սադ բ'արէվ իմ աղգէդ լարին...
 Աւնան գ'իսէր, հօփս անուս,
 Յար սէվուրիդ, բաքն անուս...
 Էլա գ'ացի մէնձ լանդ,
 Էղէվս էգավ իմ լարը.
 Ինցոն էգար ան լանդ,
 Բանքէ ցըլէի քու լարը:

Մարիամ ցաղըրը գարգ'էր
 Մըզուրա լաննէրը,
 Մէգ դ'ի սիրին գարձէր,
 Մէգ դ'ի գ'աննէրը:
 Մարիամ թօնիք վառէր,
 Դընագը մուխ է,
 Էրէսը մալմլ է,
 Ացէրը թուխ է...
 Մի' լար, Մարիամ, մի' լար,
 Ացէրը գավրի
 Քէդ բըզդիդ գարքօղին
 Դընագըն ալէրի...

Ուսգո'ւց գուգ'աս լուսիդ—մուսիդ,
 Օղքըդ մըդնա վարթի փըսիդ,
 Դուն բըզդուդիդ բաքըդ անուսիդ...

¹ Այս և հաջորդ նյութերը վերցրել ենք Անգրանիկի «Տէրսիմ» հեքից:

Ուսգո՞ւց գուգ՛աս, ցիմ իմանա,
Դձրդէդ եղեր էմ դիվանա (խենթ)
Բացիդ մը դուր, մարթ ցիմանա...
Ուսգո՞ւց գուգ՛աս, վարի էքուն
Գօզ մի խավօղ փըրթուր քօքուն (արմատից)
Բացիդ մի դուր բարուդ հօքուն...

Գարմիր վարթ էս ձաղզանց մէց.
Ու բ՛ուսէր էս մէսին մէց,
Յէս իմ լարը գը ձանցնամ,
Դասը հազար մարթուն մէց:

— Առա աղգէգ մօր գէս աղճիզը,
Ինցու օր անի գօլըրու, գը բ՛օլօրվի՝
Իր մօր բէս գըլլի:
Ամա մառնէր գէս մօր աղգէգ աղճիզը,
Ինցու օր անի գօլօրվի, գը բ՛օլօրվի՝
Իր մօր բէս գըլլի:

— Դընդէս, հալսար դէ՛ս,
Օր գ՛աղասդանին
Ցէրթաս սէվէրէս:

Քնարն (ափ, եզր)՝ հայի՛ր՝ գըդափն առ,
Մօրը հայի՛ր՝ աղճիզն առ:

— Աղճիզն անր՛անր ունի, ամու ունի, գ՛ացէք անօնց ըսէք.
անգնր գուգէն՝ թօղ դան, մէնք ի՞նց շըսէնք. անգնր առված գըրէր է
գըլլի, անգնր ցէ գ՛ըրէր՝ ցըլլիր:

— Գաբը խավի (հաստատ) ըլլի:

Աղր՛անր, դ՛ուն հանջ էս:

— Հըբը ան մարթը ի՞նց ան...

— Վա՛յ, ասդված ձէր հօքին առնան ու Քիսդօս ձէր դունն
սվրան. հըբը ինցո՞ւ ըսիք ք՛ի դաձիզ էնք:

— Յէ, լէս քուրդ էմ:

— Յէս Հալլօրու ս. Գարարէդ վանք սադ մնացէր էմ, ան դէ-
ղա դէրդէրն ինձի սօրվէցուց հայէրէն խօսալ:

—Քիսդոս անոնց դ'ունն ամբն ինձ'ի սուղ խափէցին, ըսին
քի դաձիգ էնք, հալբա քի (մինչդեռ) հալ էն էղած... Բ'ան ցի գա
լլ, բ'ան ցի գա:

—Դըղանք, անբէս ըլ մըռնէլ, անբէս ըլ մըռնէլ. ըմը բեւք'ե
անբէս ազադի'լ... էգէք, մի վախնաք...

Խըլըձըմըզ վուռըրիս դասա,
Դաս լանըրդի բասդան բասա,
Նէրան^օ խացարսըն օսման փասա,
Միրազլարդուր գանան խարսիս:
ՀԱՎԼՈՐԻ ԳՅՈՒՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

Դ'ուն հա^օլ էս, անբան. լա ի'նցբէս ան սուռնէրու ձ'էռքն ըն-
գար...

—Խուռան ըլլիմ լէս անոնց զօրքին զօրացը. ցաղա (երեխա)
ցունէցօղ մարթըն էր խըման անգուց, գուգօլիս ու գըխըլավանա
(կգիրանա) ու դըղա ցաղա գը'էրան...

—Ացղիգ ու դըղա (էգ ու արու) սըրբանօցնէր էն անօնք...

ԽՈՋՆԳԵՂԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ

—Դառավարութունն ի'նց ան...

—Հիքիմաթն է.

—Է, մէնք ան հիքիմաթը ցինք ձանցնար. ցունքի անի
անօրէն ան, դ'աղասդան էնէլ ցի' գ'իդան. մէնք մինադ սիլանը զը
ձանցնանք: Սազօր էնք, բիթունս ըլ սիլան գառնէնք ու գէր-
թընք, անօնց մարէրը գըլացնէնք: Դըռըլըռութին ըսածըզ վօլ ան,
ասվազ օր սիրէս սիդագ խօսա, հասգնանք: Դ'ուն դանա ցաղա
(երեխա) լէս, քու խէլքըզ դանա դէղ ցի ընէր...: Մէզի Միրաք
օղլի գըռէն, գ'իդէս, մէնք ան հիքիմաթին բ'էրանը հազար հէղ
ցափէր էնք:

ՄԸՐ ԼԱՌՆԵՐՈՒ ՔԱՌՍՈՒՆ ՀԱՐԱՄԻՔԸ

Մըզ Միրաք ըսին գա, ցում իրէք հըզ եգեր || անգար Միրաք
անունը օր դաս, գիսէրը էրածըզ գիգ'ա գըհա. դ'ուն գըհը || գըհա
ցիս գինար մըր բարու ուզն ու գօրութունը:

¹ Այս տեքստը մեզ տրամադրել է ընկ. Գ. Հաւաջյանը. հեղինակի տա-
ռադարձության մեջ կատարել ենք մասնակի շտկումներ՝ հաշվի առնելով

Մեր սեպտանու գոլլէքից եզրայիւր բիւհ վախնա գա. մըր թըրէրը գէճէգի Ո գաճաճից ցէլիդից սուքուգ ա, օր հէդ մը գէրգըս, ճինը ճինամօրօվ էրգու գէս անէ գա, մէգը մէգ դ'ին, մըգալը մըգալ դ'ին սավուրմիս անէ գա:

Ըմ բարու հօր մընձ բարը ըն՛ը ըս թըրօվ քառսուն հարամիքի հըդ գըռվէր ա էվ իրա ձէռօք օխըը հարամու գըլինիւրը գըռէր ա:

Ըն էռէչ Ս աննչ ըդ' հարամիքը օր փեղագըռէր ըն մըր լաննէրը, մըր խալիսին ձ'էռ ցին դար ըղըր. ըսդ'ին—ընդ'ին քէվրան Ս քարվան գըռին, մարթ սօթգին էվ իրըք—իրաց մըր լաննէրը բայվին էվ արբին գա. միրօք ըլ ընունց ձ'էռ ցին դար դիօր ըն զամանագ, էրփ հարամիքուց մէգ-երգուսը սարվօր ախցըգէրանց մէգը փախցնիլ ուզին գա. ըմմա ախցըգէրանց հավարին վըրէ ըսդիուց-ընդ'իուց հասնին գա էվ ախցիգը ազանդին գա. ըդ' օրվընից դուսման ըլնին գա:

Օր մըն ըլ բ'էրք ու բ'արիք հավթիւու դ'ըցօղ մըր ախցըգէրանց դ'էմը էլնին գա էվ մըր հարսնէրից Մարօն վախցընիլ ուզին գա. Մարօն էղնիդի բըս քարից-քար թըռնա գա էվ դ'ան հասնըլուն էղէլութունը նախըլ անէ գա:

Ըդօր վըրէ մըր մէնձ բարը դադղած, ձ'էռը թըրին դ'ընէ գա է իրա գըղօց, ախբ'ըրդօց էվ թօնէրաց ըսէ գա.

—Յա' միք, լա' հարամիքը:

Բընի մը օր էդքը բարը գանցէ գա մըր ցէղը էվ ըսէ գա.

